

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ԳԼՈՐԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐԸ Գազիկ Տեր-Հարությունյան, Սերգեյ Գրինյան

Աֆրիկյան աշխարհամասի սկսված վերաբաժանումն ու շղթայական հեղափոխությունն արաբա-իսլամական աշխարհում իրենց նշանակալությամբ համադրելի են գուցե թե ԽՍՀՄ եւ «սոցիալականացում» փլուզման հետ. իզուր չէ, որ ԱՄՆ նախագահին այդ իրադարձությունները համեմատել է «բեռլինյան պատի քանդման» հետ: Բնական է, որ այդ գործընթացն առաջ է բերել բազմաթիվ հարցեր, որոնց պատասխանները փորձում է տալ վերլուծաբանական հանրությունը:

Ներքին հանգամանքներ. Այդ իրադարձությունները լուսաբանվում են տարբեր տեսանկյուններից: Մեկնաբանները պատճառների թվում նշում են համաաշխարհային տնտեսական ճգնաժամը եւ սննդամթերքի գների աճը: Դա էականորեն անդրադարձավ Թունիսի եւ հատկապես ավելի աղքատ Եգիպտոսի վրա: Ինչ վերաբերում է համեմատաբար հարուստ Լիբիային, նշվում են միջցեղային հակասությունները: Որոշ ցեղերի թվաքանակը հասնում է միլիոնի, միեւնույն ժամանակ՝ Քադաֆիի հանդեպ թշնամաբար տրամադրված ցեղերն ապրում են երկրի արեւելքում՝ էներգակիրներով հարուստ շրջաններում, եւ այս համատեքստում են մեկնաբանները զուգահեռներ անցկացնում Իրաքի հետ: Ըստ էության, այս հանգամանքներն են նպաստել քաղաքացիական պատերազմի բռնկմանը: Բահրեյնում՝ այդ երկրների մեջ ֆինանսական առումով ամենաբարեկեցիկ երկրում, սրվել են հարաբերությունները շիա եւ սուննի դավանական խմբերի միջեւ, ինչը նույնպես հղի է երկարատեւ քաղաքացիական դիմակայությանը:

Շատ վերլուծաբանների, հիմնականում Իսրայելի անվտանգության համատեքստում, անհանգստացնում է կիսաընդհատակից դուրս եկած իսլամիստների ակտիվությունը՝ հանձին, օրինակ, «Մուսուլման եղբայրների»:

Տարածաշրջանի երկրների համար ընդհանուր է հոգնածությունը միեւնույն առաջնորդների երկարամյա կառավարումից (երեւույթ, որը «խորհրդային մարդկանց» ծանոթ է որպես «Բրեժնեւի ախտանիշ»), պերմանենտ բռնաճնշումներից, կոռուպցիայի աճից եւ սոցիալական այլ անհաջողություններից: Աչքի է զարնում նաեւ ժողովրդագրական հիմնախնդիրը. տարածաշրջանում ընդհանուր առմամբ բուռն աճում են

քաղաքներն ու քաղաքային բնակչությունը, իսկ արաբական աշխարհում, ինչպես գրում են, «չափից ավելի մեծացել է գրագետ, բայց գործազուրկ երիտասարդության թիվը»: Ուստի, զարմանալի չէ, որ «հեղափոխական պոտենցիալի» ինդեքսով (revolting-index) 16 երկրներից աղյուսակի վերին 5 սանդղակները զբաղեցնում են արաբական երկրները, չորսը «սեւ Աֆրիկայի» երկրներ են (հետաքրքիր է, որ Ադրբեջանը ցանկում զբաղեցնում է 10-րդ տեղը):

Արտաքին գործոններ. Այս օբյեկտիվ ներքին հանգամանքներից ավելանում են արտաքին գործոնները, մասնավորապես, գունավոր հեղափոխությունների իրագործման հայտնի տեխնոլոգիաների գործարկումը, այս անգամ՝ «ուրբաթօրյա աղոթքների» շեշտադրմամբ: Ընդ որում՝ կարելու էր են խաղում «Ապրիլի 6-ի շարժման» տիպի կազմակերպությունները՝ «քեֆայա» – «բավական է» կարգախոսով (հիշենք «կմարան» Վրաստանում), մարտական դիրքում է գտնվում ժողովրդավարության աջակցման աներիկյան Ազգային ֆոնդը եւ այլն: Բնական է, որ այս իրադարձությունների հանդեպ անտարբեր չմնացին նաեւ իսլամական աշխարհում առաջնորդության հավակնող Իրանն ու Թուրքիան:

Ձանգվածային լրատվամիջոցները համատարած նշում են, որ հեղափոխական շարժման մեջ ի հայտ է եկել ցանցակենտրոն-տեղեկատվական պատերազմների այնպիսի արդյունավետ գործիք, ինչպիսին են սոցիալական ցանցը (Facebook, Twitter եւ այլն), բազմաթիվ բլոգներ: Օրինակ, դեռ 2010թ. հունիսին Google-ի մերձավորարեւելյան բաժնի մենեջեր Վաել Գոնիմը Facebook-ում հակամուրաբայան էջ էր բացել, որն օրական կես միլիոն այցելու էր ունենում: Իրենց առանձնահատուկ դերը, հատկապես Թուրքիայում, խաղացին նաեւ WikiLeaks-ի «արտահոսքերը»: Կարելու էր, իհարկե, նաեւ «Ալ Ջազիրան», որի ռեպորտաժներն իրենց արձագանքն էին գտնում «արաբական փողոցում»: Սակայն նշենք, որ «Ալ Ջազիրան» ընդամենը տեղեկատվություն էր փոխանցում, այնինչ ինտերնետ միջոցները կատարում էին նաեւ կազմակերպող եւ ուղղորդող դեր:

Բայց արտաքին ճնշումը չի սահմանափակվում տեղեկատվական պատերազմներով: Ամերիկյան նավատորմը հայտնվել է Լիբիայի ափերին, իսկ բրիտանական հատուկ ջոկատայինները՝ երկրի ապստամբած շրջաններում: Սաուդյան Արաբիան, ի մշան աջակցության Բահրեյնի սուլենի վարչախմբին, որտեղ տեղի ունեցող հուզումների մեջ «տեսնում» են «Թեհրանի ձեռքը», ցուցադրում է իր զրահատանկային զորքերի հնարավորությունները: Այս փուլում, հնարավոր է, այս բոլոր գործողությունները կատարվում են «սպառնալիքն ավելի ուժեղ է, քան դրա իրագործումը» սկզբունքի ոգով, բայց հազիվ թե որեւէ մեկը կարողանա

երաշխավորել, թե այս ամենը չի վերաճի ռազմական գործողությունների:

Անխուսափելի փոխակերպում. Այս բոլոր ներքին եւ արտաքին գործոնները, որոնք թե՛ ընդհանրություններ, թե՛ տարբերություններ ունեն, արդյունքում հանգեցրին վարչակարգերի տապալմանը Թունիսում եւ Եգիպտոսում: Իսկ այն երկրները, որոնք կանգուն մնացին, ամենայն հավանականությամբ, տեսանելի ապագայում այս կամ այն չափով փոխակերպումների կենթարկվեն (կամավոր-հարկադրական, պարզապես հարկադրված կամ էլ դրսից ռազմական միջամտության հետեւանքով, ինչպես ցույց են տալիս զարգացումները Լիբիայի շուրջ): Արդեն այս փուլում Ալժիրի ղեկավարությունը չեղյալ է հայտարարել 1992-ից մտցված արտակարգ իրադրությունը, Սուդանի եւ Եմենի նախագահները հայտարարել են, որ չեն առաջադրի իրենց թեկնածությունները գալիք ընտրություններին, Յորդանանում պաշտոնանկ են արել վարչապետին, Սիրիայի նախագահը բարեփոխումներ է խոստացել, իսկ որոշ ղեկավարներ էլ «ժողովրդից ազատվել են» շռայլ ֆինանսական ներարկումներով (Քուվեյթ եւ Սաուդյան Արաբիա):

Վերոնշյալ հանգամանքները, իհարկե, օբյեկտիվ բնույթ են կրում եւ փոքրիշատե ընդհանուր պատկերացում են տալիս գործընթացի վերաբերյալ: Բայցեւայնպես, արդի հեղափոխական գործընթացներն ավելի բարդ եւ բազմամակարդակ երեւույթներ են, քան դրանք երբեմն ընկալվում են: Օրինակ, կասկած չի հարուցում, որ այս բոլոր իրադարձություններում կա «նյութական» ասպեկտի ավելի քան զգալի մասնաբաժին. հանուն ռեսուրսների պայքար է մղվում առաջատար երկրների միջեւ: Այդ պայքարն ինչ-որ տեղ մեզ հայտնի «սառը պատերազմների» կլոնն է, բայց ի տարբերություն դրանց, ընթանում է «բոլորը բոլորի դեմ» բանաձեւով: Որոշ փորձագետներ կարծում են, որ նման դիմակայությունը մի ինչ-որ արդեն ոչ հեռավոր պահի՝ այսպես կոչված «այսինչ օրը, այսինչ ժամին», կարող է փոխակերպվել դասական «թեժ» պատերազմի՝ հանուն պարզապես գոյատևելու:

Միեւնույն ժամանակ, մենք կարծում ենք, որ «ճշմարտության պահը» կբացահայտվի (եթե ընդհանրապես բացահայտվի) միայն այն ժամանակ, երբ «գաղտնագերծվեն» գործընթացի աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական համատեքստերը՝ հաշվի առնելով սոցիալական, ժողովրդագրական այն հայեցակարգերը, որոնք այսօր գերակշռում են կառավարման գլոբալ մակարդակում:

Սակայն լավ հայտնի է, որ քաղաքական մեզանախագծերի իրականացումը միշտ չէ, որ տալիս է այն արդյունքները, որոնք ի սկզբանե հույս ունեին ստանալ դրանք կազմողները: Մասնավորապես, դա վերաբերում է հետհեղափոխական արաբական աշխարհի «կառավարելիության» հիմ-

նախնդրին, որի զարգացման միտումները հեռու են միանշանակ լինելուց: Այս համատեքստում օգտակար է ծանոթանալ գլոբալ կառավարման հիմնախնդրի վերաբերյալ քաղաքական-փորձագիտական հանրությունում գերակշռող կոնցեպտներին:

Գլոբալ կառավարման սցենարներ

2010թ. վերջին հրապարակվեց (դեռ տարեսկզբին պատրաստ) «2025թ. գլոբալ կառավարումը. կրիտիկական իրավիճակ» զեկույցը: Այս նախագծում, բացի հիմնական կազմակերպիչներից՝ ԱՄՆ Յետախուզության ազգային խորհրդից (NIC) եւ ԵՄ անվտանգության ուսումնասիրման ինստիտուտից (EUISS), մասնակցում էին նաեւ մի շարք հեղինակավոր փորձագետներ Ռուսաստանից, Չինաստանից, Յնդկաստանից եւ այլ երկրներից: Որպես ելակետային թեզիս ընդունվեց այն, որ գլոբալ կառավարման համակարգը (նկատի է առնված պետական, միջազգային եւ ոչ պետական ինստիտուտների, անդրազգային ընկերությունների եւ նույնիսկ ցանցային կառույցների ամբողջությունը) այն տեսքով, ինչպես որ ստեղծվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եւ ժամանակին եղել է արդյունավետ, արդեն անզոր է 21-րդ դարի բարդ հիմնախնդիրների առջեւ: Փորձագետները կարծում են, որ նման իրավիճակը պայմանավորված է նրանով, որ «գլոբալացման արագ տեմպերը» շատ ավելի են մեծացրել այն ռիսկերը, որոնք կապված են էթնիկ հակամարտությունների, ահաբեկչության, վարակիչ հիվանդությունների, ինչպես նաեւ սպառնալիքների նոր տեսակների հետ. կլիմայի փոփոխություն, էներգիայի, պարենի եւ ջրային ռեսուրսների անբավարարություն, միգրացիոն հոսքեր եւ նույնիսկ նոր տեխնոլոգիաներ (հատկապես կենսատեխնոլոգիաների ոլորտում, քանի որ այս ոլորտի զարգացումը շատ ռիսկեր է պարունակում, մասնավորապես՝ էթնիկ բնույթի): Փաստաթղթի հեղինակները նշում են հետեւյալ չորս հնարավոր սցենարները, որոնցով կարող են զարգանալ իրադարձությունները հաջորդ 15 տարիներին.

1. «Մնալ նավարկության մեջ»
2. «Հատվածայնացում» (ֆրագմենտացիա)
3. «Եվրոպական կոնցերտի» վերադարձը»
4. «Խաղի իրականությունը. հակամարտությունը գերազանցեց համագործակցությանը»:

1. «Նավարկության մեջ մնալու» սցենարը կարելի է անվանել չափավոր-լավատեսական: Փորձագետները կարծում են, որ չնայած աճող ռիսկերին եւ կառավարման միջազգային համակարգի համեմատաբար դանդաղ կատարելագործմանը, այդ համակարգն առաջիկա տարիներին դեռ ի վիճակի է գլուխ հանել իրավիճակից: Ավելին, նրանց կարծիքով՝

նման սցենարն ամենահավանականն է թվում: Միեւնույն ժամանակ, նախագծի հեղինակները հակված են այն մտքին, որ ավելի հեռավոր ապագայում կառավարման ինստիտուտները ներկա տեսքով կենսունակ չեն եւ արդեն ի վիճակի չեն լինի «մնալ նավարկության մեջ»:

2. «*Հատվածայնացման*» սցենարը չափավոր հոռետեսական է: Այս տարբերակի համաձայն՝ աշխարհում տեղի է ունենում տարածաշրջանների հատվածայնացում: Ասիան կառուցում է իր կարգը: Եվրոպան ասես պարփակվում է ինքն իր մեջ եւ ձգտում է լուծել բնակչության կենսամակարդակի անկման հետ կապված հիմնախնդիրները: Միացյալ Նահանգները, հաշվի առնելով աշխատուժի աճը, կարող է համեմատաբար լավ վիճակում հայտնվել, եթե, իհարկե, հաղթահարի բյուջետային դեֆիցիտի եւ պարտքերի հայտնի հիմնախնդիրները: Այս պայմաններում, շնորհիվ նոր հաղորդակցային տեխնոլոգիաների, գլոբալացման գործընթացը (այս հասկացությանը փորձագետները բացառապես դրական իմաստ են տալիս) շարունակվում է, բայց անհամեմատ ավելի չափավոր տեմպերով:

3. «*Եվրոպական կոնցերտի*» վերադարձը՝ առավել հուսալի սցենարն է: Ըստ այս սցենարի՝ չնայած էկոլոգիական ռիսկերին եւ հակամարտային իրավիճակներին, միջազգային համագործակցությունը, գլոբալ հիմնախնդիրների լուծման առումով, ընդհանուր առմամբ բոլորովին էլ վատ չի ընթանում: Դրան նպաստում է այն, որ ԱՄՆ-ը, այլ երկրների հետ միասին, ինչպես նաեւ Չինաստանը եւ Չնդկաստանը համատեղ ջանքեր են գործադրում: ԵՄ-ն, իր հերթին, սկսում է ավելի գլոբալ դեր կատարել, քան մինչ այդ: Իրենք՝ նախագծի փորձագետները, կարծում են, որ սույն սցենարը պակաս հավանական է, քան առաջին երկուսը, ուստի այն պետք է ընկալել որպես մի ինչ-որ նպատակ, որին պետք է ձգտել: Նկատենք նաեւ, որ վերլուծաբանական հանրությունում գերիշխում է այն կարծիքը, թե Եվրոպայի գլոբալ կարգավիճակի բարձրացումը հնարավոր է միայն Եվրասիայում քաղաքակրթական ոգով եւ տնտեսական շահերով նրան մոտ քաղաքական տարածքի ձեւավորմամբ: Ուստի, չի կարելի բացառել, որ նման սցենարի երեւան գալն ինքնատիպ ռեւերանս է նախագծի մասնակիցների կողմից՝ արված ընդունող կողմին՝ իրենց Եվրոպացի գործընկերներին:

4. «*Խաղի իրականությունը. հակամարտությունը գերազանցեց համագործակցությանը*» սցենարը առավել հոռետեսական է: Չինաստանի եւ ԱՄՆ հարաբերությունները լարվում են, խորտակվում են Եվրոպայում միջին դասի լավագույն կյանքի հույսերը, ինչը հանգեցնում է լարվածության սոցիալական ոլորտում: Մերձավոր Արեւելքում միջուկային սպառազինությունների մրցավազք է ընթանում: Տիրում է կասկածի եւ

լարվածության մթնոլորտ, ինչն անհնար է դարձնում, հատկապես Ասիայում, կառավարման գլոբալ ինստիտուտների հետագա բարեփոխումները:

Սակայն վերադառնանք Մերձավոր Արևելք եւ փորձենք համադրել գլոբալ կառավարման սցենարներն այս տարածաշրջանում հնարավոր զարգացումների տարբերակների հետ:

Ո՞ր սցենարն է գործում. Արաբական աշխարհում ընթացող գործընթացների նույնիսկ հպանցիկ վերլուծությունից երեւում է, որ արտաքին ուժերի շահագրգռվածությունը, մասնավորապես, այն է, որ տարածաշրջանն ավելի կառավարելի դարձնեն. չէ՞ որ ավելի կառավարելի լինելը նշանակում է ոչ միայն ընդլայնել ազդեցության ոլորտները, այլեւ ենթադրում է ռեսուրսային բազայի արտոնյալ հասանելիություն: Առաջին հայացքից կարելի է կարծել, թե իրենց նախնական տրամաբանությամբ իրադարձությունները տարածաշրջանում ենթարկվում են «Մնալ նավարկության մեջ» սցենարին: Չէ՞ որ մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ ավտորիտար վարչակարգերի տապալման եւ փոխակերպման արդյունքում տեղի կունենա (արդեն զգալի չափով տեղի է ունենում) արաբական երկրների ինքնիշխանության որոշակի նվազում: Ներկա միտումները վկայում են այն մասին, որ այդ երկրներում գրեթե անխուսափելիորեն կմտցվի բոլորի համար ընդհանուր սահմանադրական-ժողովրդավարական ատրիբուտիկա: Արդյունքում՝ արաբական աշխարհը, իր բոլոր ներքին հակասություններով ու հիմնախնդիրներով հանդերձ, կդառնա ավելի հոմոգեն, քան մինչեւ հեղափոխական շարժումը, անկախ այն բանից, թե ինչով է այն ավարտվել:

Բայց դրա կողքին, տարածաշրջան կվերադառնա շատ կարելուր քաղաքակրթական եւ կրոնական տարր՝ իսլամը, այսինքն՝ տեղի կունենա տարածաշրջանի որոշակի կրոնականացում: Հավանաբար, հարկ է համաձայնել նաեւ այն վերլուծաբանների կարծիքի հետ, որ գոնե սկզբում «Մուսուլման եղբայրների» (ի դեպ, չի մտցված ահաբեկչական կազմակերպությունների ամերիկյան ցուցակում) նման իսլամիստական հոսանքները բավական չափավոր դիրքորոշում կորդեգրեն:

Կան բոլոր հիմքերը ենթադրելու, թե տարածաշրջան քաղաքական իսլամի վերադարձի գործընթացը հիմնականում նման կլինի նրան, ինչ տեղի ունեցավ Թուրքիայում, որտեղ Էրբաքանի գլխավորած ֆունդամենտալիստներին փոխարինելու եկան Ռեջեփ Էրդողանի Արդարություն եւ զարգացում կուսակցության չափավոր իսլամիստները: Հայտնի է նաեւ, որ «չափավոր իսլամիզմի» տեխնոլոգիան շատ բանով հենվում է RAND-ի «Չափավոր իսլամական ցանցերի ձեւավորումը» նախագծի վրա: Հիշենք նաեւ, որ NIC «Գլոբալ միտումներ - 2025. փոփոխվող աշխարհ» զեկույ-

ցում կանխատեսվում է, որ «Ալ-Քաիդայի» դերը ժամանակի ընթացքում զգալիորեն կնվազի: Քաղաքական իսլամի այսպիսի մոդելը, ի տարբերություն ֆունդամենտալիզմի, ավելի կանխատեսելի է եւ կառավարելի, ուստի եւ ավելի ընդունելի է արտաքին աշխարհի համար:

Միեւնույն ժամանակ, ըստ երեւութին *«Նավարկության մեջ մնալու»* սցենարը տարածաշրջանում կարող է այնքան էլ երկար չտեւել: Օրինակ, եթե շարունակենք համեմատությունն այդ նույն Թուրքիայի հետ, «չափավոր իսլամի» էվոլյուցիան կարող է թեքվել արմատականության կողմը, ինչը խնդիրներ կստեղծի ոչ միայն հարեւանների (Իսրայել), այլեւ ընդհանրապես Եվրոպայի հետ: Մինչդեռ, «բազմամշակութայնության» դեմ պայքարի գիծ որդեգրած ԵՄ-ն այսօր անջրպետվում է նույնիսկ «չափավոր իսլամացած» Թուրքիայից: Սա նշանակում է, որ կան բոլոր հիմքերը՝ ենթադրելու, թե նման հարաբերություններ կհաստատվեն ԵՄ-ի եւ արաբական երկրների միջեւ, եթե այնտեղ գերակշռող լինի քաղաքական իսլամի գաղափարախոսությունը: Հայտնի է, որ այդ հիմնախնդիրն արդեն ակտուալացվել է՝ կապված աֆրիկյան աշխարհամասից բազմաթիվ փախստականների հետ, եւ չի թվում, թե այդ գործընթացն առաջիկայում կսկսի նվազել. չէ՞ որ հասարակությունները թանկ են վճարում հեղափոխության համար եւ երկար ուշքի չեն գալիս կառավարման ապակազմակերպումից ու տնտեսության փլուզումից հետո:

Այսպիսով, արաբական երկրների ներքին մերձեցումը եւ իսլամացումը կուղեկցվեն Եվրոպայի հետ քաղաքակրթական-գաղափարախոսական սահմանազատմամբ, ինչն իր հերթին կուժեղացնի *«Հատվածայնացում»* սցենարում նկարագրված աշխարհակարգի ձեւավորման միտումները: Այնինչ, «Նոր Մերձավոր Արեւելքը»՝ Մարոկոյից մինչեւ Պակիստան, ամենեւին էլ մնացյալ աշխարհից համեմատաբար «մեկուսացված» ողջ Ասիան չէ, որի մասին խոսվում է NIC-ի եւ ISS-ի գեկույցում. այդ տարածաշրջանը նաեւ «հատված» է աշխարհի այդ մասում:

Իսկ ի՞նչ կլինի հետո: Որոշ վերլուծաբաններ կարծում են, որ «Նոր Մերձավոր Արեւելքը» շուտով կդառնա ինքնատիպ «բուֆերային գոտի» Չինաստանի եւ Արեւմտյան աշխարհի միջեւ: Մինչդեռ, հենց բուֆերային գոտիներն են ամենից հաճախ դառնում սուր դիմակայության ասպարեզ: Այնպես որ՝ միանգամայն հնարավոր է, որ *«Հատվածայնացումը»* շատ շուտով կարող է փոխակերպվել մեկ այլ վիճակի, որը կենթարկվի առավել հոռետեսական՝ *«Խաղի իրականությունը. հակամարտությունը գերազանցել է համագործակցությանը»* սցենարի տրամաբանությանը:

ՆՈՐ ՄԵՐԾԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Սուրեն Սարյան

2011-ի «արաբական հեղափոխությունները» Մեծ Մերձավոր Արևելքի վերածեման գործընթացի սկիզբը դրեցին: Իրադարձությունները Մադրիդում եւ Ծոցի երկրներում ձեւավորում են լիովին նոր ռազմավարական իրադրություն եւ վերստին ասպարեզ հանում «Մեծ Մերձավոր Արևելք» նախագիծը, որը կարծես թե թաղվել էր Ջորջ Բուշի վարչակազմի հեռանալու հետ միասին:

Մեծ Մերձավոր Արևելքն, ինչպես հայտնի է, նախագծվել էր ամերիկյան դիվանագետների եւ զինվորականների կողմից դեռեւս 1990-ականների սկզբին՝ որպես գերտարածաշրջան, որը ձգվում է Հս. Աֆրիկայից մինչեւ Հնդկաստանի, Չինաստանի եւ Ռուսաստանի սահմանները: Ամերիկյան ստրատեգները չէին էլ թաքցնում, որ Մեծ Մերձավոր Արևելք նախագծի հիմնական նպատակը կապիտալների, էներգակիրների եւ զինված ուժերի ազատ տեղաշարժն է Եվրասիայի տարածքով՝ ամերիկյան վերահսկողության տակ: Իսկ վարչակարգերի փոփոխությունն այս գերտարածաշրջանում կազմում է սույն նախագծի բաղկացուցիչ մասը:

Եթե 2001թ. Աֆղանստանի եւ 2003թ. Իրաքի պատերազմները հետապնդում էին Մեծ Մերձավոր Արևելքի արեւելյան հատվածի կառուցման նպատակը, ապա ներկայումս հերթը հասնում է դրա արեւմտյան եւ հարավային հատվածներին:

Կարծիքները վերոնշյալ գործընթացի վերաբերյալ տարաբնույթ են եւ բաժանվում են հիմնականում երկու խմբի:

Փորձագետների մի մասը գտնում է, որ արաբական հեղափոխությունները տարածաշրջանի ժողովրդավարացման սկիզբն են հանդիսանում: Դրանք նաեւ արդիականացման գործընթացի սկիզբն են եւ զարգացման նոր հնարավորություններ են տալիս:

Ակնհայտ է, որ վերջին իրադարձություններն իսլամական հեղափոխություններ չեն. դրանք չեն ընթանում իսլամիստական, հակամերիկյան կամ հակաարեւմտյան կարգախոսների ներքո եւ առավելապես կենտրոնացած են ներքին տնտեսական, քաղաքական եւ սոցիալական խնդիրների վրա: Այս իրադարձություններում իսլամիստական կազմակերպությունները գրավեցին սպասողական դիրք՝ հստակ չկողմնորոշվելով իրենց անելիքների հարցում:

Եթե Բուշի հանրապետական վարչակազմի օրոք կիրառվում էր արտաքին զինված միջամտության եւ ժողովրդավարության հաստատման ուժային տարբերակը, ապա Օբամայի դեմոկրատական վարչակազմը հետեւում է «մեղմ» քաղաքականության ուղեգծին՝ տարածաշրջանում քաղաքական վերակառուցման գործընթացները ներսից իրականացնելու առումով: Այսինքն՝ այս անգամ քաղաքական եւ աշխարհաքաղաքական վերակառուցումը կրում է «կամավոր» բնույթ:

ԱՄՆ-ը կարծես հրաժարվել է այն դոկտրինից, որը կիրառում էր Մեծ Մերձավոր Արեւելքում տասնամյակներ շարունակ. այն է՝ աջակցել մահմեդական երկրներում իշխող աշխարհիկ, թեւեւ ավտորիտար վարչակարգերին՝ իսլամիստական շարժումները եւ դրանց հավակնությունները զսպելու նպատակով: Ավելին, այն հեշտությունը, որով Վաշինգտոնը հրաժարվեց օգնել տարածաշրջանում իր առանցքային դաշնակիցներից մեկին՝ Ղոնոսի Մուբարաքին, առաջացրեց ամերիկյան մյուս դաշնակցի՝ Սաուդյան Արաբիայի որոշակի շփոթությունը: Այնտեղ հասկացան, որ ցանկացած պահի կարող են զրկվել համաշխարհային առաջնորդի աջակցությունից:

Տարածաշրջանում ստեղծվելիք անկայունությունը նաեւ կարող է լրացուցիչ առիթ տալ ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի ռազմական ներկայության ամրապնդման համար, ինչպես, օրինակ, Լիբիայի դեպքերը թույլ տվեցին Միջերկրական ծովում մեծացնել ամերիկյան եւ բրիտանական զինուժի քանակը:

Ավելին, վերջին զարգացումները, փաստորեն, թույլ են տալիս Արեւմուտքին վերահսկելիության սահմաններում պահել արմատական իսլամիստական շարժումները: Մասնավորապես, «Մուսուլման եղբայրներին» հնարավորություն է տրվել ինտեգրվել Եգիպտոսի քաղաքական համակարգին՝ ծայրահեղականությունից հրաժարվելու դիմաց:

Փորձագետների մյուս մասը համարում է, որ տարածաշրջանին սպառնում է արմատականացման եւ ծայրահեղականության ուժեղացման վտանգը, որը լրջագույն խնդիր է դառնալու Արեւմուտքի անվտանգության եւ զարգացման համար: Հետեւաբար, ամերիկյան ազդեցությունը տարածաշրջանում անկում է ապրում, ինչպես ժամանակին այստեղ կորցրին իրենց դերակատարումը Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը: Որեւէ այլ ուժ, այդ թվում՝ Չինաստանը, վակուումը լցնելու հիմնարար հայտ չի ներկայացնում: Այս տեսակետը ենթադրում է, որ կարող է ձեւավորվել նոր համաշխարհային իսլամական բեւեռ (այն ժամանակին կոչվում էր Խալիֆաթ), որի առաջացումն այսօր թեւեւ քիչ հավանական է թվում, սակայն գործընթացների արմատականացման դեպքում այդ հավանականությունը բավական կաճի:

Այս առումով լուրջ վերածելում կարող է սպասվել Սաուդյան Արաբիային եւ Պակիստանին, որոնք համարվում են իսլամական աշխարհում ԱՄՆ առանցքային դաշնակիցներ, սակայն իրականում ներկայացնում են լրջագույն սպառնալիք թե՛ արեւմտյան քաղաքակրթության, թե՛ իսլամի արդիականացման համար, քանի որ վահաբական եւ թալիբանական կենտրոնները գտնվում են հենց այս պետությունների տարածքում:

Վաշինգտոնը, փաստորեն, չանսաց Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդալահի կոչերին՝ թույլ չտալ Մուբարաքի հեռացումը, ինչից հետո Սաուդյան դինաստիան հասկացավ, որ այլեւս զրկվել է անձեռնմխելիությունից: Եմենի հնարավոր մասնատման եւ Բահրեյնում շիաների հաղթանակի դեպքում Սաուդյան Արաբիան կարող է կորցնել նաեւ նավթով հարուստ արեւելյան նահանգները, որտեղ բնակչության մեծամասնությունը կազմում են շիաները: Հենց Սաուդյան Արաբիայում հանգուցալուծում կարող են ստանալ այն բոլոր զարգացումները, որոնք կապված են Մեծ Մերձավոր Արեւելք ծրագրի հետ:

Հետաքրքրական է, որ այս ընթացքում Իրանն ու Իսրայելը մեղադրում էին իրար իսլամական աշխարհում համատարած ապակայունացում սերմանելու մեջ: Իսրայելցի փորձագետները նշում են, որ հենց արմատական տրամադրությունների ուժեղացման միջոցով է Իրանը փորձում տապալել հին վարչակարգերը, որոնք կայունություն էին ապահովում:

Իսրայելի ղեկավարությունը գտնում է, որ հրեական պետության համար գերադասելի է կայունությունը, քան թե ժողովրդավարությունը, որն իսլամական աշխարհում ավարտվում է արմատական իսլամիստների իշխանության գալով, ինչպես դա տեղի ունեցավ «Համասի» եւ «Հիզբալլահի» դեպքում:

Ուստի, Իսրայելում զգուշանում են, որ Եգիպտոսի դիրքերը տարածաշրջանում էապես թուլանալու են եւ բերելու են հրեական պետության երկու հակառակորդ երկրների՝ Իրանի եւ Թուրքիայի ուժեղացմանը:

Իրանը եւ Թուրքիան պաշտպանեցին հեղափոխությունները՝ ձգտելով ամրապնդել իսլամական աշխարհում իրենց դիրքերը: Թուրքիան սկսեց կտրուկ փոխել իր դերակատարումը՝ վերածվելով նեոսամականություն քարոզող եւ մահմեդական աշխարհը պաշտպանող տարածաշրջանային տերության: Պատահական չէ, որ Եգիպտական «Մուսուլման եղբայրների» ղեկավարներն արդեն հայտարարել են, թե Եգիպտոսի համար որպես քաղաքական մոդել ընդունում են Արդարություն եւ զարգացում կուսակցության կառավարումը Թուրքիայում:

Հարկ է նշել, որ ներկայումս Անկարայի եւ Թեհրանի մարտավարական շահերը տարածաշրջանում համընկնում են: Նրանք համատեղ թուլացնում

են արաբական աշխարհը: Փորձագետները նշում են, որ արդեն երկու երկրների միջև առկա է պայմանավորվածություն՝ Իրաքից ԱՄՆ դուրս գալուց հետո այդ պետությունն ազդեցության գոտիների կիսելու վերաբերյալ: Սիրիայի հետ ռազմավարական համագործակցության հաստատումը եւս թուրքական եւ իրանական քաղաքականության մասն են կազմում:

Փորձագետները կարծում են, որ Իրանի իսլամական վարչակարգը փորձելու է ձեւավորել «շիական գոտի», որը կներառի Մեծ Մերձավոր Արեւելքի բոլոր այն շրջանները, որտեղ բնակչության մեծամասնությունը շիա է: Դրանով իրանական ռազմավարությունը հնարավորություն կստանա օղակի մեջ վերցնել իր աշխարհաքաղաքական եւ կրոնական հիմնական հակառակորդին՝ Սաուդյան Արաբիային: Դրա արդյունքում Մեծ Մերձավոր Արեւելքը կարող է վերածվել շիաների եւ սուննիների միջև աշխարհաքաղաքական ու կրոնական պայքարի թատերաբեմի: Միաժամանակ, Իրանի ակտիվացումը կբերի սուննիական ճակատի համախմբմանը:

Իրանում իրավիճակն անկանխատեսելի է: Հավանական է, որ տարածաշրջանում ներկա գործընթացները կարող են սկզբնավորել ԱՄՆ – Իրան հարաբերությունների ապաշրջափակումը: Գաղտնիք չէ, որ այդ հարաբերություններն առանցքային նշանակություն ունեն ամբողջ տարածաշրջանի համար, առանց որի կարգավորման տարածաշրջանային բազմաթիվ հարցեր կմնան այդպես էլ չլուծված: Ամերիկա-իրանական առանցքի հնարավոր վերականգնումը կդառնա Մեծ Մերձավոր Արեւելքի վերածեւման գործում վճռորոշ գործոն:

Ակնհայտ է, որ Մեծ Մերձավոր Արեւելքի տարածաշրջանը մտնում է խոշոր ցնցումների ժամանակաշրջան: Հնարավոր է համարվում, որ փոխվեն պետությունների սահմաններ եւ անվանումներ, ինչպես, օրինակ, Թուրքիայի, Իրաքի եւ Իրանի տարածքներում Քուրդիստանի առաջացումը, Սաուդյան Արաբիայի մասնատումը սուննի եւ շիա հատվածների, Եմենի, Պակիստանի եւ Աֆղանստանի բաժանումը եւ այլն:

Պատմականորեն տարածաշրջանային պետությունների սահմանները գծվել են եվրոպական գաղութարար տերությունների կողմից XX դարի սկզբին, ինչի հետեւանքով այդ սահմանները տարածաշրջանում մշտական անկայունության եւ ժողովուրդների միջև թշնամանքի ու լարվածության անսպառ աղբյուր են:

Հարկ է նաեւ նշել, որ մենք վկան ենք դեռեւս 1990-ականներին Սեմյուել Հանթինգտոնի կողմից ավետված «քաղաքակրթությունների բախման» կարեւորագույն դրվագի, երբ քրիստոնեական Արեւմուտքը

լուծում է իր գաղափարախոսական հակառակորդի՝ իսլամական աշխարհի գազման խնդիրը, նպաստելով նրա ներքին թուլացմանը եւ պառակտմանը: Միաժամանակ, Եվրոպան ակնհայտորեն շարժվում է մահմեդական աշխարհի համար իր սահմանների փակման ուղղությամբ («բազմամշակութայնության» քաղաքականության քննադատում, Մերձավոր Արեւելքից եւ Աֆրիկայից ներգաղթի սահմանափակում, ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության մերժում եւ այլն):

Սակայն Արեւմուտքի համար վերջին զարգացումներն ունեն նաեւ ավելի հեռահար նպատակներ: Արեւմտյան ստրատեգները հասկանում են, որ համաշխարհային ուժի կենտրոնը եվրատլանտյան տարածաշրջանից տեղաշարժվում է դեպի խաղաղօվկիանոսյան ավազան, եւ Արեւելյան Ասիայի տերությունների տնտեսական վերելքին հաջորդելու է Արեւմուտքի քաղաքակրթական, ռազմական եւ քաղաքական առաջնորդությանը մարտահրավեր նետող նոր ուժի ի հայտ գալը: Եվ այդ ուժը միտված է լինելու հակաարեւմտյան դաշինքի ստեղծմանը՝ առաջին հերթին Արեւմուտքի կրոնական-գաղափարական թշնամու՝ իսլամական Արեւելքի հետ, ինչի մասին եւս զգուշացնում էր Հանթինգտոնը: Հավանական է, որ այսօր Մեծ Մերձավոր Արեւելքում ծավալվող վերածեւման գործընթացն ուղղված է հենց այդ դաշինքը կանխելուն: Այդ ճանապարհին հիմնական ճակատամարտը գնալու է Իրանի եւ Պակիստանի համար, երկու պետությունների, որոնք այսօր օգտվում են Չինաստանի աջակցությունից:

Դրան գումարվում է պայքարը Կենտրոնական Ասիայի համար: Այս ֆոնին հետաքրքրական էր տեղեկատվությունը, թե սկսվել են բանակցություններ Աֆղանստանում, Ուզբեկստանում եւ Թուրքմենստանում ամերիկյան ռազմակայանների տեղակայման շուրջ՝ Ղրղզստանում ամերիկյան ռազմական ներկայությանը զուգահեռ:

Հետեւաբար, կարելի է փաստել, որ Արեւմուտքն այժմ լուծում է Արեւելյան Ասիայի հարցը՝ իսլամական աշխարհն ապակայունացնող «զարթոնքի» միջոցով: Ձեւավորվում է Նոր Մերձավոր Արեւելք:

ՆԵՌՕՍՄԱՆԻՉՄԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռուբեն Մելքոնյան

Ներկայումս Թուրքիայի արտաքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցնող Ահմեդ Դավութօղլուն, դեռևս 2001թ. հրատարակած իր «Ստրատեգիական խորություն. Թուրքիայի միջազգային դիրքը» սովորածավալ աշխատության մեջ վերլուծելով Թուրքիայի տարածաշրջանային եւ աշխարհաքաղաքական շահերն ու առաջնահերթությունները, տալիս է մի շարք տեսական գնահատականներ եւ առաջարկություններ: 2002թ. Արդարություն եւ զարգացում կուսակցության իշխանության գալուց հետո քաղաքագետ-վերլուծաբան Դավութօղլուի հայացքներին թուրքական քաղաքական շրջանակները սկսեցին ավելի մեծ կարեւորություն տալ, իսկ հետագայում, երբ նա ստանձնեց Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի պաշտոնը, այդ տեսական դրույթները սկսեցին տեղ գտնել նաեւ գործնական հարթությունում:

Այսօր Թուրքիայում Դավութօղլուի մշակած տեսություններից առավել մեծ ճանաչում եւ տարածում է գտել, այսպես կոչված, նեոսոմանիզմի գաղափարախոսությունը, որի մի շարք դրույթներ հետզհետե ավելի ակներեւ են դառնում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ: Ըստ նեոսոմանիզմի հիմնական դրույթի, Թուրքիան ձգտում է քաղաքական, տնտեսական եւ հոգեւոր առումով լիդերի դեր ստանձնել նախկինում Օսմանյան կայսրության մեջ մտած մի շարք տարածաշրջաններում՝ Մերձավոր Արեւելքում, Բալկաններում, Յյուսիսային Աֆրիկայում: Կովկասի պարագայում Թուրքիան փորձում է կիրառել «գրոխնդիր հարեւանների հետ» սկզբունքը, սակայն, միեւնույն ժամանակ, ձգտում է առանցքային դեր խաղալ տարածաշրջանային կոնֆլիկտներում, դառնալ յուրահատուկ «դատավոր եւ հաշտարար»: Բացի այդ, Թուրքիան հարավկովկասյան պետություններում, մասնավորապես՝ Ադրբեջանում եւ Վրաստանում, ուժեղացնում է իր ներկայությունը հատկապես տնտեսական ոլորտում:

Այսօր տարածված է այն կարծիքը, որ հենց Ահմեդ Դավութօղլուն է նեոսոմանիզմի գաղափարախոսության առաջամարտիկն ու ճարտարապետը, սակայն նեոսոմանիզմի շուրջ մտորումներ, քննարկումներ եղել են նաեւ ավելի վաղ. Դավութօղլուն մասնագիտորեն համակարգել եւ

մշակված տեսք է տվել դրանց: Նեոսմանիզմի հետ ուղղակի աղերսներ ունեցող հայտարարություններ է արել ժամանակին Թուրքիայի նախագահ Թուրգուօ Օզալը՝ խոսելով բալկանյան մուսուլմանների մասին: Թուրք հրապարակախոս Ասլի Այդընթաշբաշը վերհիշում է 1990-ականների կեսերին իր գրույցն այն ժամանակվա Թուրքիայի մեջլիսում ներկայացված «Ռեֆահ» (Բարօրություն) իսլամամետ կուսակցության պատգամավոր Աբդուլա Գյուլի հետ, երբ վերջինս պատմում էր, թե ինչպես ինքն ու իր համախոհները երազում են Թուրքիայի եւ հարեւան արաբական երկրների միջեւ ստեղծել մի համադաշնություն, որտեղ Թուրքիային վերապահված է առանցքային դեր: Արդեն այսօր, երբ վերոնշյալ մտքերի հեղինակը Թուրքիայի նախագահն է, նրանց երազանքները ձեռք են բերել ավելի համակարգված բնույթ եւ լուրջ տեղ զբաղեցրել թուրքական արտաքին քաղաքականության մեջ:

Նեոսմանիզմի կենսագործման համար խիստ կարեւոր է իսլամական-արաբական աշխարհում բարենպաստ տրամադրությունների ձեւավորումը, որի ուղղությամբ տարվում է նպատակաուղղված քաղաքականություն: Վերջին տարիներին Թուրքիան ակտիվ աշխատում է արաբական երկրների հետ հարաբերությունների սերտացման, հեղինակության բարձրացման ուղղությամբ: Բավական ցայտուն օրինակ է Սիրիայի հետ Թուրքիայի հարաբերությունների ջերմացումը եւ տնտեսական ոլորտում արձանագրված աճը: Սակայն շատ վերլուծաբանների կարծիքով՝ նեոսմանիզմի առաջին բացահայտ եւ աղմկահարույց դրսևորումը տեղի ունեցավ Դավոսում, որտեղ Թուրքիայի վարչապետ Էրդողանը կոշտ քննադատության ենթարկեց Իսրայելին՝ նրա պաղեստինյան քաղաքականության համար եւ լքեց դահլիճը: Այդ դեպքից որոշ ժամանակ անց Ղազայի մոտակայքում ռազմական բախում տեղի ունեցավ թուրքական նավերի եւ իսրայելական զինված ուժերի միջեւ, որին հետեւեցին թուրք բարձրաստիճան ղեկավարների ծայրահեղ կոշտ հայտարարությունները եւ թուրք-իսրայելական հարաբերությունների սառեցումը: Հենց այդ դեպքերից հետո էր, որ արաբական աշխարհում կտրուկ բարձրացավ Թուրքիայի հեղինակությունը. բավական է նշել, որ արաբական մի շարք երկրներում այդ օրերին տեղի ունեցող հակաիսրայելական բողոքի ակցիաների ժամանակ մարդիկ ծածանում էին թուրքական դրոշը, պարզում Էրդողանի լուսանկարներով պաստառներ եւ այլն:

Թուրքիայի հեղինակության աճին զուգահեռ, արաբական աշխարհում կտրուկ աճում է նաեւ Էրդողանի անձնական հեղինակությունը. արաբական լրատվամիջոցների անցկացրած սոցիոլոգիական հարցումների արդյունքում նա հայտարարվում է տարվա մարդ, նրա անունով են կոչում

նորածին երեխաների եւ այլն: Թուրքիայի արտաքին քաղաքականության հասցեին գովեստի խոսքեր են հնչում Պաղեստինում, Դավութօղլուին համարում են նորօրյա Քիսինջեր, իսկ պաղեստինյան որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ բացահայտ կերպով նեոսամանիզմի գաղափարախոսությունը համարում են Մերձավոր Արեւելքի խնդիրների լուծման բանալի: Լիբիայի առաջնորդ Քադաֆին եւս օրերս խիստ ուշագրավ հայտարարություն արեց, որն անմիջապես լայն տարածում գտավ թուրքական ՁԼՄ-ում: Ըստ այդ տեղեկատվության, Քադաֆին, խոսելով թուրք-լիբիական հարաբերությունների մասին, ասել է. «Մենք բոլորս էլ օսմանցի ենք»:

Վերջերս արաբական աշխարհում տեղի ունեցող դեպքերը լրացուցիչ առիթ են ընձեռում Թուրքիային միջամտելու մերձավորարեւելյան գործընթացներին՝ հավատարիմ մնալով նեոսամանիզմի սահմանած քաղաքական առաջնահերթություններին: Եթե դիտարկենք արաբական երկրներում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ երրորդ պետությունների հետաքրքրվածությունը, ապա միանշանակ կարող ենք փաստել, որ տարածաշրջանում ամենակտիվը Թուրքիան է: Մասնավորապես՝ եգիպտական դեպքերի ամենաթեժ պահերին թուրք բարձրաստիճան շատ գործիչներ հանդես եկան հայտարարություններով, որտեղ կրկին աչքի ընկավ նեոսամանիզմի «ճարտարապետ» Դավութօղլուն, որը միջնորդական հանձնառությամբ այցելեց Մերձավոր Արեւելք: Թուրքիայի ակտիվ շահագրգռվածությունը եգիպտական դեպքերով Դավութօղլուն բացատրեց շատ պոպուլիստական ձեւով. «Եգիպտոսի կայունությունը մեզ համար ունի ստրատեգիական նշանակություն, եւ պետք չէ, որ մեր ակտիվությունն ընկալվի որպես այլ պետության ներքին գործերին միջամտելու փորձ»: «Եգիպտոսը մեզ համար եղբայրական եւ բարեկամ մի երկիր է, ու այդ ամենը հիմնված է պատմական արմատների վրա»: «Մենք մեր արաբ եղբայրների խնդիրները համարում ենք մերը, նրանց հոգսերը մեր հոգսերն են»: Իր հերթին վարչապետ Էրդողանը կոչով հանդես եկավ՝ ուղղված ԵՄ Մուբարաքին, ԵՄ եգիպտական ժողովրդին, որտեղ նա նշեց նաեւ, որ Թուրքիան չի մտահոգված միայն իր շահերով, այլ մտածում է նաեւ հարեւան երկրների ու ժողովուրդների բարօրության մասին: Մուբարաքի հրաժարականից հետո Թուրքիայի կառավարությունը հանդես եկավ նաեւ պաշտոնական հայտարարությամբ՝ կոչ անելով Եգիպտոսի ժամանակավոր կառավարությանը հաստատել ժողովրդավարություն եւ երկրի ղեկը հնարավորինս արագ փոխանցել ժողովրդի կողմից ընտրված իշխանությանը: Մուբարաքի տապալումից քիչ հետո Եգիպտոս այցելեց նաեւ Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը

եւ կրկնեց իր երկրի կառավարության պաշտոնական հայտարարության վերոնշյալ կետերը:

Արեւմտյան վերլուծաբանների ուշադրությունից, բնականաբար, չի վրիպել Մերձավոր Արեւելքում թուրքիայի ակտիվ քաղաքականությունը: Հեղինակավոր Foreign Policy ամսագրում վերլուծաբան Ջոշուա Վոքերը նշում է, որ Օսմանյան կայսրության անկումից հետո արդեն 21-րդ դարում թուրքիան կրկին ձգտում է վերադառնալ Մերձավոր Արեւելք եւ դառնալ տարածաշրջանային որոշիչ ուժ: Ըստ Վոքերի, Օսմանյան կայսրության անկումից հետո մինչ այժմ թուրքիան արաբական աշխարհում դիվանագիտական, տնտեսական եւ քաղաքական ոլորտներում այս չափ ակտիվ երթել է չի եղել:

Այս օրերին թուրքիան տարածաշրջանում ակտիվ աշխատանքներ է տանում նաեւ լրագրողների եւ վերլուծաբանների մակարդակով: Իրադարձությունների ամենաթեժ կետերում գտնվող թուրք լրագրողներն ուսումնասիրում եւ փոխանցում են թուրքիայի նկատմամբ արաբական հասարակությունների տրամադրությունները: Թուրքական վերլուծական շրջանակները եւս բավական ակտիվ են. օրինակ՝ TESEV հետազոտական հիմնադրամը վերջերս կատարել է մի ուսումնասիրություն, որը կրել է «Միջին Արեւելքում թուրքիայի ընկալումները» վերնագիրը: Մասնավորապես՝ եգիպտացիների շրջանում արված ուսումնասիրության արդյունքում ի հայտ է եկել այն փաստը, որ հարցվածների 15 տոկոսի համար գայթակղիչ է իսլամական պետության «թուրքական մոդելը»: Եվ պատահական չէ, որ այս օրերին հատկապես թուրքական մամուլում շարունակ տարփողվում է Մերձավոր Արեւելքում «թուրքական մոդելի» արատահանման մասին տեսակետը:

Փաստորեն, այս պահին թուրքիայի գերակտիվ քաղաքականությունը Մերձավոր Արեւելքում պարունակում է մի քանի բաղկացուցիչ. նախ՝ թուրքիան աշխատում է օգտվել արաբական աշխարհում ընդգծված լիդերի բացակայությունից եւ լրացնել այդ վակուումը, երկրորդ՝ թուրքիան փորձում է առավելագույնս օգտագործել սեփական մոդելի՝ Արեւմուտքի համար ընկալելի լինելու հանգամանքը եւ դառնալ ակտիվ միջնորդ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ:

Սակայն չպետք է կարծել, որ թուրքիայի նեոօսմանական հավակնությունները միանշանակ են ընդունվում արաբական երկրներում: Օրինակ՝ Եգիպտոսի արտաքին գործերի նախարարությունը բավական կոշտ արձագանքեց թուրքական պաշտոնյաների հայտարարություններին եւ հստակ նշեց, որ իր երկրի համար ընդունելի չեն ո՛չ թուրքական ԱԶԿ-ի մոդելը եւ ո՛չ էլ թուրքիայի «մեծ եղբոր» հավակնությունները: Արաբ

վերլուծաբանները չքողարկված հեզնանքով նշում են, թե շուտով Մերձավոր Արեւելքում չի մնա գեթ մեկ խնդիր, որի լուծմանը ներգրավված չլինի Թուրքիան: Իսկ որոշ թուրք վերլուծաբաններ կարծում են, որ այս օրերի ոգեւորւթյան ալիքի հիման վրա հետեւութուններ անելն այդքան էլ ճիշտ չէ, եւ այսօր չի կարելի ասել, թե արաբական աշխարհը լիովին պատրաստ է ընդունել Թուրքիայի առաջնորդութունը: Այստեղ երկրորդական չէ նաեւ արաբ ժողովրդի հիշողութունը, որում թուրք-օսմանյան անցյալն ամենեւին էլ դրական գույներով չի պատկերված:

Մերձավոր Արեւելքում Թուրքիայի գերակտիվ քաղաքականության դրդապատճառների հարցում վերլուծաբաններն իրավացիորեն կարեւորում են ԱՄՆ-ի հանգամանքը: Արաբական աշխարհում մինչեւ վերջերս ԱՄՆ շահերի հիմնական ներկայացուցիչը համարվում էր Եգիպտոսը, սակայն վերջին իրադարձութուններից հետո պարզ է դառնում, որ կարող են փոխվել նաեւ ԱՄՆ-ի խաղադրույքները: Մի շարք վերլուծաբաններ նաեւ նեոսամահիզմի գաղափարախոսության հետեւում տեսնում են ԱՄՆ-ին: Վերոնշյալի օգտին է խոսում նաեւ այն, որ այսօր, արաբական երկրներում ընթացող հուզումների համատեքստում, շատ հաճախ են տեղի ունենում հեռախոսագրույցներ Օբամայի եւ Էրդողանի միջեւ, ինչը լայն տարածում է գտնում միջազգային մամուլում եւ բարձրացնում Թուրքիայի հեղինակութունը:

Ստեղծված իրավիճակում Թուրքիային հաջողվում է դառնալ եւ ԱՄՆ-ի գործընկերը, եւ իսլամական աշխարհի շահերի ներկայացուցիչը: Թուրքիան կարողանում է քաղել առավելագույն օգուտներ այս ամենից: «Էքսպերտ» վերլուծական հանդեսի հեղինակ Իլյա Գերմանի կարծիքով. «Վաշինգտոնի նոր մերձավորարեւելյան քաղաքականութունն առավելագույնս համապատասխանում է Մերձավոր Արեւելքում Անկարայի հավակնոտ ծրագրերի իրականացմանը»:

Ամփոփելով՝ նշենք, որ Մերձավոր Արեւելքում Թուրքիայի վարած գերակտիվ քաղաքականութունն ուշագրավ դրսեւորումներ ու զարգացումներ է արձանագրում, եւ կարելի է ասել, որ արտաքին քաղաքականության մեջ նեոսամահիզմը սկսում է տալ իր պտուղները:

ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ **ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

Արաբական աշխարհում տեղ գտած զարգացումների ֆոնին եւ 2012թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ՝ իրանական ընդդիմությունը շարունակում է ակտիվ հակակառավարական գործունեություն ծավալել: Միաժամանակ, Իրանի իշխանական վերնախավում շարունակվում են վերադասավորումները, որոնք պետք է ազդեն 2012-ի խորհրդարանական եւ 2013-ի նախագահական ընտրությունների արդյունքների վրա:

Ընդդիմության գործունեությունը

Փետրվարի 28-ին Agence France-Presse գործակալությունը հաղորդագրություն տարածեց այն մասին, որ ընդդիմության առաջնորդներ Միրհոսեյն Մուսավիի եւ Մեհդի Քյարուբիի տնային կալանքը փոխարինվել է ձերբակալությամբ: Հաղորդագրության համաձայն՝ ընդդիմադիրները եւ նրանց կանայք ձերբակալվել էին փետրվարի 24-ին եւ տեղափոխվել Թեհրանի Յեշմիթայե բանտ, որտեղ գտնում են նաեւ ընդդիմադիր ուժերը ներկայացնող հարյուրավոր ձերբակալված երիտասարդներ: Սակայն արդեն մարտի 1-ին FARS լրատվական գործակալությանը բանտից տեղեկացրին, որ ընդդիմության առաջնորդները երբեք չեն ձերբակալվել եւ բերման չեն ենթարկվել, ձերբակալվել է միայն Մ.Քյարուբիի որդի Ալի Քյարուբին՝ հակակառավարական միջոցառումներ հրահրելու եւ դրանց մասնակցելու պատճառով: Այս տեղեկատվությունն ավելի ուշ հաստատվեց նաեւ Իրանի գլխավոր դատախազության կողմից: Հարկ է նշել, որ Agence France-Presse-ը Մուսավիի եւ Քյարուբիի ձերբակալության մասին լուրը տարածել էր՝ հղում կատարելով Մուսավիի ոչ պաշտոնական կայքի խմբագրի վրա:

Կարելի է ենթադրել, որ փետրվարի 14-ից տնային կալանքի մեջ գտնվող Մուսավիին ինքն է ապատեղեկատվություն տարածել իր ձերբակալության մասին՝ ակնկալելով, որ այն մարտի 1-ին նախատեսված ընդդիմության հանրահավաքին ավելի մեծաթիվ զանգված դուրս կբերի: Չնայած ընդդիմության հավաքը մարտի 1-ին տեղի ունեցավ, բայց այն մեծաքանակ չի կարելի համարել, ինչը վկայում են նաեւ արեւմտյան աղբյուրները: Առաջիկա ամիսներին կարելի է սպասել ընդդիմության

առաջնորդների ձերբակալությունների մասին մեծաքանակ ապատեղեկատվության թե՛ իրանական ընդդիմադիր եւ թե՛ արեւմտյան աղբյուրների կողմից: Վերջիններս ձգտելու են դրա միջոցով բորբոքել հասարակությանն՝ ավելի ակտիվ փողոցային գործողությունների դիմելու:

Հարկ է նշել, որ ընդդիմությունը ջանք չի խնայում օգտագործելու բոլոր հնարավոր միջոցներն ու առիթները՝ նոր ցույցեր կազմակերպելու համար: Օրինակ՝ կանանց միջազգային օրվա կապակցությամբ ընդդիմության առաջնորդներ Մ.Մուսավին եւ Մ.Քյարուբին կոչ արեցին իրենց համախոհներին դուրս գալ փողոց եւ բողոքի ակցիաներ կազմակերպել հանուն Իրանի քաղաքացիների իրավունքների պաշտպանության: Բողոքի ակցիաները ճնշվեցին եւ ցրվեցին ոստիկանական ուժերի կողմից, մի քանի տասնյակ մասնակիցներ ձերբակալվեցին: Հարկ է նշել, որ Մարտի 8-ը, որը տարբեր երկրներում նշվում է որպես կանանց հավասարության պայքարի օր, ո՛չ շահական Իրանում, ո՛չ էլ իսլամական հանրապետությունում երբեք որպես պաշտոնական տոն չի նշվել: Ավելին, ժամանակին Մարտի 8-ին բողոքի ակցիաներ կազմակերպվում էին շահի եւ իսլամական իշխանությունների դեմ հանդես եկող «Թուրե» կոմունիստական կուսակցության կողմից, որը կառավարության կողմից ջախջախվել է դեռ 1980-ականներին: Այդ տոնը կարելի է համարել հակակրոնական, քանզի պայքարում է կանանց հավասարության եւ ազատության համար, ինչն անընդունելի է այն պետություններում, որտեղ իսլամական էթիկան պետական քաղաքականության մաս է կազմում:

Մարտի 8-ը հակակառավարական միջոցառումների համար օգտագործելու իրանական ընդդիմության փորձերը, թերեւս, խորհրդանշում են իրանական հակակառավարական շարժման գաղափարախոսության վերափոխումը. եթե 2009-ին այն հիմնված էր իսլամական արժեհամակարգի եւ կառավարման ձեւի պահպանման անհրաժեշտության վրա, ապա այսօր այն հակահամակարգային շարժում է, որի՝ ներկայումս կասկածելի թվացող հաղթանակի դեպքում կարող է փոխվել Իրանի կառավարման ողջ համակարգը:

Փաստորեն, ընդդիմադիր շարժումն Իրանում, որը նախկինում իշխանական համակարգի մի թեւի պայքարն էր մյուս թեւի նկատմամբ, սահուն ձեւափոխվում է հասարակության պայքարի իշխանական համակարգի դեմ: Ցավոք, պետք է նշել, որ կադրային վերադասավորումներն իշխանական ոլորտում (մեղմ պահպանողականները հեռացվում են առանցքային պաշտոններից, նրանց փոխարինում են ավելի կոշտ գծի կողմնակիցները), հանգեցնելու են հասարակություն – պետություն հակասությունների հետագա խորացման, ընդդիմադիր շարժման հեղափոխականացման:

Վերադասավորումներ իշխանությունում

Մարտի 8-ին Իրանում կայացան Իրանի Փորձագետների խորհրդի նախագահի ընտրությունները, որոնց արդյունքում նախագահի պաշտոնից հեռացավ Ալի Չաշեմի-Ռաֆսանջանին: Այդ պաշտոնը բավական կարելուր նշանակություն ունի Իրանի ներքաղաքական կյանքում, քանի որ Փորձագետների խորհուրդն ազդեցիկ սահմանադրական կառույց է, որի հիմնական գործառույթներից է իսլամական հանրապետության հոգեւոր առաջնորդի ընտրությունը: Չաշեմի-Ռաֆսանջանին զբաղեցնում էր Փորձագետների խորհրդի նախագահի եւ Նպատակահարմարության խորհրդի ղեկավարի պաշտոնները, որոնք նրան դարձրել էին հոգեւոր առաջնորդից եւ նախագահից հետո ամենաազդեցիկ քաղաքական եւ տնտեսական գործիչը: 2009-ի նախագահական ընտրություններից հետո, երբ Չաշեմի-Ռաֆսանջանին անուղղակիորեն պաշտպանեց հակահամադիներժադյան ուժերին, նրա իշխանության եւ ազդեցության դեմ պայքարը դարձավ ծայրահեղ պահպանողական կառույցների քաղաքականության կարելուր նպատակներից մեկը: Այս պայքարն առաջնորդվել է հիմնականում Իրանի նախագահի անմիջական շրջապատի կողմից, սակայն վերջին շրջանում Չաշեմի-Ռաֆսանջանիի դեմ հնչող քննադատությունները կրում են գրեթե համապետական բնույթ: Սակայն 2010-ի նոյեմբերին նախկին նախագահի որդու ձերբակալության մասին դատարանի որոշումը ցույց տվեց, որ շարժումը Չաշեմի-Ռաֆսանջանիի դեմ ուղղորդվում է պետության կողմից:

Այսպիսով, մարտի 8-ին Չաշեմի-Ռաֆսանջանին կորցրեց իր երկու կարելուր պաշտոններից մեկը: Չնայած արեւմտյան մամուլում Ռաֆսանջանիի հեռացումը ներկայացվում է որպես նրա կրած պարտություն եւ ծայրահեղ պահպանողականների հաղթանակ, իրականությունը, սակայն, որոշակիորեն այլ է: Մինչեւ Փորձագետների խորհրդի նախագահի ընտրությունները Չաշեմի-Ռաֆսանջանին հայտարարել էր, որ չի առաջադրի իր թեկնածությունը, եթե նախագահի պաշտոնին հավակնի իսլամական գործիչ Սոհամադ Կանին: Հարկ է նշել, որ չնայած Կանին ավելի պահպանողական քաղաքական հայացքներ ունի, բայցեւայնպես յուրահատուկ հարաբերությունների մեջ է Չաշեմի-Ռաֆսանջանիի հետ. նրանք երկուսով ղեկավարում են պահպանողական Պայքարող հոգեւորականության կազմակերպությունը, որը երկար ժամանակ է արդեն, ինչ Իրանի խորհրդարանի ազդեցիկ ուժերից է: Բացի այդ, Չաշեմի-Ռաֆսանջանիին Կանիի հետ կապում են բավական ջերմ հարաբերություններ, որոնք սկսվել են 1970-ականներից (երբ նրանք պայքարում են շահական իշխա-

նության դեմ) եւ խորացել 1980-ականներին (երբ այաթուլա խոմեյնիի ամենամոտ հետեւորդներն էին): Եվ չնայած Չաշեմի-Ռաֆսանջանին ստիպված եղավ լքել իր երկու կարեւոր պաշտոններից մեկը, նա կարողացավ ապահովել այնպիսի հաջորդականություն, որպեսզի Փորձագետների խորհուրդը չվերածվի նախկին նախագահի դեմ տարվող քաղաքականության նոր օղակի: Նշենք, որ Մոհամադ Կանին, հավանաբար, կկառավարի Փորձագետների խորհրդի աշխատանքները միայն մեկ շրջան՝ 2 տարի, քանի որ 80 տարեկան է. ընտրություններից առաջ նա հայտարարեց, որ ստիպված է ստանձնում կարեւոր կառավարչական գործառույթը:

Չաշեմի-Ռաֆսանջանիի համար մոտակա շրջանում կարեւոր է այն, որ պահպանի Նպատակահարմարության խորհրդի նախագահի պաշտոնը: 2012թ. փետրվարին լրանում է խորհրդի ներկայիս կազմի լիազորությունների ժամկետը, որից հետո Իրանի հոգեւոր առաջնորդը պետք է կազմի եւ հաստատի խորհրդի նոր կազմը: Այս մարմինը, որը փաստացի ստեղծման օրվանից՝ 1989-ից, ղեկավարում է Չաշեմի-Ռաֆսանջանին, կարեւոր մարմին է, որն Իրանի խորհրդարանի եւ Փորձագետների խորհրդի միջեւ միջանկյալ տեղ է զբաղեցնում եւ հիմնականում քննարկում է Իրանում ընդունվող նոր օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, հանդես է գալիս դրանք վերանայելու կամ չընդունելու միջնորդությամբ: Չաշեմի-Ռաֆսանջանիի համար կարեւոր նշանակություն ունի Նպատակահարմարության խորհրդի նախագահի պաշտոնը պահպանելը, քանի որ այն կորցնելու դեպքում Իրանի նախկին նախագահը կկորցնի պաշտոնական ազդեցությունն ու դերն Իրանի ներքաղաքական եւ տնտեսական կյանքում: Չաշեմի առնելով այն, թե ինչ ատելությամբ է տարվում Չաշեմի-Ռաֆսանջանիի դեմ քարոզչությունը ծայրահեղ պահպանողականների կողմից վերահսկվող իրանական մամուլում, կարելի է ենթադրել, որ պաշտոնից եւ դրա ընձեռած անձեռնմխելիության (ոչ պաշտոնապես) կորստից հետո խոշոր բիզնեսում կարեւոր տեղ զբաղեցնող Չաշեմի-Ռաֆսանջանիի ընտանիքի դեմ սկսվելու է իսկական արշավ, որը կործանարար կարող է լինել թե՛ նրա ընտանիքի եւ թե՛ նրա կողմից աջակցություն ստացող ընդդիմադիր շարժման համար:

Կարեւոր նշանակություն ունի այն, թե ինչպես է Չաշեմի-Ռաֆսանջանին փորձում պահպանել պաշտոնը: Կարծես թե, Չաշեմի-Ռաֆսանջանին պատրաստվում է իր շուրջը համախմբել հին պահպանողական ուժերին, որպեսզի նրանց գլխավորելով՝ ազդեցության մեծ չափաբաժին ապահովի Իրանի մեջլիսի նոր կազմում, որն ընտրվելու է 2012-ի մարտին: Չին պահպանողականների ակտիվացման մասին են խոսում Պայքարող

հոգեւորականության կազմակերպությունում կատարվող վերադասավորումները եւ իրանական մամուլում հրատարակվող կարծիքներն այն մասին, որ հենց Չաշենի-Ռաֆսանջանին է առաջնորդելու այս կազմակերպությունը գալիք խորհրդարանական ընտրություններում: Նշենք, որ Մուսավիի եւ Քյարուբիի կողմից առաջնորդվող ընդդիմադիր շարժման հեղափոխականացումն, ամենայն հավանականությամբ, հանգեցնելու է նրան, որ Մուսավիի եւ Քյարուբիի քաղաքական թելը ներկայացնող գործիչներին Իսլամական հեղափոխության պահապանների խորհուրդը թույլ չի տա գրանցել որպես պատգամավորության թեկնածուներ՝ նրանց պայքարը վերջնականապես ուղղորդելով դեպի փողոց: Այս պարագայում հին պահպանողականները՝ Չաշենի-Ռաֆսանջանիի ղեկավարությամբ, հնարավորություն ունեն իրենց կողմը գրավել գործող նախագահի կոշտ քաղաքական եւ տնտեսական գծից դժգոհներին՝ ապահովելով լուրջ դիրքեր գալիք խորհրդարանում:

Սա վկայում է այն մասին, որ Չաշենի-Ռաֆսանջանին եւ նրա շուրջ հավաքված ուժերն, ամենայն հավանականությամբ, կշարունակեն անուղղակիորեն աջակցել ընդդիմությանը՝ դրանում տեսնելով սեփական դիրքերի պահպանման գրավականը:

«ԱՐԱՔԱԿԱՆ ՍՑԵՆԱՐԻ» ԶԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՐԲԵՋԱՆՈՒՄ Արաքս Փաշայան

2011-ից ի վեր արաքական աշխարհում սոցիալ-քաղաքական ուղղվածությամբ հակակառավարական հուժկու միտինգներն ու ցույցերը, թունհսում եւ Եգիպտոսում վարչակարգերի տապալումը եւ հեղափոխական գործընթացների շարունակականությունն իրենց ազդեցությունն ունեցան նաեւ ոչ արաքական երկրներում: Մասնավորապես, հեղափոխությունների շղթայական ալիքը որոշակի մտահոգություն առաջ բերեց Ադրբեջանի իշխող վերնախավում եւ նոր թափ հաղորդեց հասարակական-քաղաքական դիսկուրսներին: Այս երկրի շուրջ հետաքրքրությունն ավելի մեծացավ, երբ «The Wall Street Journal» թերթը հրապարակեց այն երկրների վարկանիշային աղյուսակը, որոնցում սոցիալական ցնցումներն ու հեղափոխություններն ավելի հավանական են. դրանում Ադրբեջանը հայտնվեց առաջին տասնյակում:

Այն, որ արաքական առանձին երկրների ու Ադրբեջանի պետական եւ սոցիալ-քաղաքական համակարգերի միջեւ որոշակի նմանություններ կան, անժխտելի է: Պատահական չէ, որ քաղաքագիտական գրականության մեջ շրջանառության մեջ է դրվել սիրիա-ադրբեջանական մոդելի մասին դրույթը: Թե՛ Սիրիայում Զաֆեզ Ալ-Ասադի (1971–2000) եւ թե՛ Ադրբեջանում Զեյդար Ալիևի (1993–2003) մահից հետո իշխանության եկան վերջիններիս որդիները՝ իշխանությունը դարձնելով «դինաստիական», որտեղ կարելուր դեր է վերապահված «անհատի պաշտամունքին»:

Ինչպես արաքական առանձին երկրներին, այնպես էլ Ադրբեջանին տիպական են ավտորիտարիզմը, կեղծված ընտրությունները, կոռուպցիայի, գործազրկության, գնաճի բարձր ցուցանիշները, սոցիալական բեւեռացվածությունը, մարդու իրավունքների ոլորտում առկա բազմաթիվ խնդիրները եւ վերջապես՝ էներգետիկ ռեսուրսներից ստացված եկամուտների ոչ համաչափ բաշխումը: Զենց դրա հաշվին է Ադրբեջանի իշխող վերնախավը հարստացել՝ ձեռք բերելով անհրաժեշտ ռեսուրսներ իրավիճակը երկրում վերահսկելու առումով:

Անշուշտ, Ադրբեջանին եւ արաքական երկրներին միավորող ընդ-

հանրական իրողություն է նաեւ իսլամը: Ճիշտ է, իսլամի նկատմամբ մոտեցումներն աշխարհիկ Ադրբեջանում միանգամայն այլ են, քան արաբական աշխարհում, սակայն այստեղ նույնպես բնակչության մեծ մասն իսլամադավան է: Իսլամն ադրբեջանական ինքնության թեւեւ ոչ առաջնային, սակայն կարեւոր բաղադրիչներից է: Շատ փորձագետների համոզմամբ՝ Ադրբեջանի անկայունացումը կարող է պայմանավորվել հենց իսլամական գործոնի հնարավոր ակտիվացմամբ:

Հատկանշական է, որ վերջին տարիներին իսլամն Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքում սկսել է էական դեր խաղալ, իսկ կրոնականացվածությունը բնորոշ է դարձել ադրբեջանական հասարակության մի հատվածին, որի շրջանում խորքային հավատացյալների թիվը հաշվվում է 7-9 տոկոս:

Նշենք, որ Ադրբեջանում կարեւոր դեր է խաղում նաեւ միջազգային իսլամական գործունը: 2006-ից ի վեր այստեղ սկսեցին բավական հիվանդագին արձագանքել այն իրողություններին, որոնք կապված էին առհասարակ իսլամական աշխարհի հետ: 2006-ին Ադրբեջանում կազմակերպվեցին բողոքի ակցիաներ ընդդեմ Մուհամմադ մարգարեի ծաղրանկարների: Փետրվարին Բաքվից ոչ հեռու գտնվող եւ շիական արմատական տրամադրություններով հայտնի Նարդարանում անկախ Ադրբեջանի պատմության մեջ առաջին անգամ այրվեցին ԱՄՆ-ի, Իսրայելի, Դանիայի, նաեւ՝ Հայաստանի ու Շվեյցարիայի դրոշները: 2006թ. ամռանը բողոքի ցույցեր կազմակերպվեցին ընդդեմ Լիբանանում իսրայելական պատերազմի եւ ի պաշտպանություն «Հիզբալ-լահի»: Նմանատիպ ցույցեր եղան նաեւ 2008թ. դեկտեմբերին՝ այս անգամ արդեն ընդդեմ Ղազայում սկսված իսրայելական ներխուժման:

Ադրբեջանցի հայտնի վերլուծաբան, արաբագետ Արիֆ Յունուսովի կարծիքով՝ իսլամը ձգտում է լրացնել քաղաքական այն վակուումը, որ վերջնականապես ձեւավորվեց 2005-ի խորհրդարանական ընտրություններից հետո, երբ իշխանությունները քաղաքական դաշտից դուրս բերեցին արեւմտամետ ընդդիմությանը: Ըստ վերլուծաբանի՝ հենց իսլամն է Ադրբեջանի ներկա իշխանությունների ամենահիմնական եւ իրական ընդդիմությունը:

Սակայն պետք է նկատի առնել, որ ադրբեջանական հասարակության հիմնական հատվածն աշխարհիկ է, որը ձգտում է ոչ թե իսլամականացման, այլ՝ ժողովրդավարացման: Այն դժգոհ է Արեւմուտքից, որն աչք է փակում ժողովրդավարական սահմանափակումների առջեւ՝ հանուն տարածաշրջանում իր աշխարհաքաղաքական հետաքրքրությունների:

Հարկ է նշել նաեւ, որ իսլամական դաշտն Ադրբեջանում միատարր,

առավել եւս՝ միասնական չէ եւ ներկայացված է իրանամետ, թուրքամետ եւ արաբամետ ուղղություններով: Իսլամական ակտիվիստների, պաշտոնական իսլամից դուրս գործող կրոնական գործիչների նկատմամբ շարունակական հետապնդումների եւ, ի վերջո, իսլամի ներսում առկա երկփեղկվածության հետեւանքով այդ դաշտում ներկայումս առկա են բազմաթիվ խնդիրներ: Սակայն որպէս հասարակական իդեալ Ադրբեջանում ավելի պոպուլյար է քաղաքական իսլամի թուրքական մոդելը, որը Թուրքիայում ներդրվեց Արդարություն եւ զարգացում կուսակցության իշխանության գալուց (2002թ.) հետո եւ իսլամի ու ժողովրդավարության համադրում է ներկայացնում:

Ինչ վերաբերում է Ադրբեջանում արմատական իսլամիզմին (որն, ի դեպ, ավելի շատ կապված է արտաքին գործոնի ազդեցության հետ) եւ այդ երկրի քաղաքական գործընթացներում դրա հնարավոր դերակատարությանը, ապա պետք է նշել, որ իշխանությունների իրականացրած կոշտ քայլերի արդյունքում նման սպառնալիք զոնե ներկա փուլում չկա: Համաձայն առանձին տեսակետների՝ թե՛ արաբական աշխարհում եւ թե՛ Ադրբեջանում իշխանությունները, որպէս կանոն, ուռճացնում են իսլամիզմից եկող մարտահրավերները: Իսկ նման մոտեցումը շահեկան է, քանի որ հնարավորություն է տալիս Արեւմուտքից ստանալ համապատասխան, այդ թվում՝ ֆինանսական միջոցներ ոչ միայն կրոնական ծայրահեղականության, այլեւ հասարակական-քաղաքական ցանկացած ակտիվություն դեմ պայքարելու համար:

Արաբական զարգացումներին Ադրբեջանում հետեւեցին մեծ լարվածությամբ: Իշխող վարչակարգը շտապեց հանդես գալ հայտարարություններով՝ նշելով, որ տնտեսական, քաղաքական եւ կրոնական առումներով Ադրբեջանը խիստ տարբերվում է արաբական աշխարհից, ուստի եւ բացառվում է արաբական երկրներում տեղի ունեցած գործընթացների որեւէ առնչություն Ադրբեջանի հետ: Տեղեկատվական դաշտում այնպիսի տպավորություն ստեղծվեց, թե անցկացվում են բարեփոխումներ, տարվում է հակակոռուպցիոն պայքար (մի քանի բարձրաստիճան պաշտոնատարներ նույնիսկ ազատվեցին աշխատանքից): Կովկասի մուսուլմանների վարչության ղեկավար, Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ Շեյխ ուլ իսլամ Ալլահ Շյուքյուր Փաշազադեն նույնպէս բացառեց Ադրբեջանի անկայունացումն արաբական հեղափոխական ալիքի վրա:

Հարկ է նշել, որ բացի ընդհանրություններից, Ադրբեջանի եւ արաբական երկրների միջեւ, բնական է, կան նաեւ տարբերություններ: Օրինակ, Ադրբեջանի սահմանադրության համաձայն՝ երկրի նախագահը կարող է վերընտրվել ընդամենը մեկ անգամ: Արաբական մի շարք

երկրներում գոյություն ունի կրոնաքաղաքական ընդդիմություն, որը հակակառավարական պայքարի կարելու դերակատարներից է, իսկ Ադրբեջանում նման ինստիտուտ գոյություն չունի:

Ամեն պարագայում, արաբական երկրներում տեղի ունեցած գործընթացները ոգեւորեցին Ադրբեջանի ընդդիմությանը եւ քաղաքականապես ակտիվ հասարակական շերտերին՝ որոշակի աշխուժություն մտցնելով Ադրբեջանի գրեթե անկենդան քաղաքական կյանքում: Ընդդիմությունը նախելառաջ պահանջեց հանել Յոսուֆ Մուբարաքի արձանը Բաքվի Բարեկամության այգուց, որը սկսեց խստորեն հսկվել ոստիկանության կողմից:

Զգալիորեն աշխուժացավ «Հասարակական պալատ» քաղաքացիական շարժումը, որը կազմավորվել է 2010թ. դեկտեմբերի վերջին՝ ի պատասխան նոյեմբերի 7-ին Ադրբեջանում հերթական անգամ կեղծված խորհրդարանական ընտրությունների: Շարժմանն անդամակցում են ընդդիմադիր քաղաքական գործիչներ եւ հասարակական ակտիվիստներ:

Հենց «Հասարակական պալատի» շրջանակներում ընդդիմադիրները (որոնց մեջ հանգուցային դեր ունի «Մուսավաթը») կոչ արեցին իշխանություններին անցկացնել արտահերթ խորհրդարանական ընտրություններ, երկրի ռեսուրսներն օգտագործել արդարացիորեն՝ հակառակ դեպքում չբացառելով թունիսյան եւ եգիպտական սցենարների կրկնությունը: «Մուսավաթ» կուսակցության առաջնորդ Իսա Ղամբարը, որը լավատես է փոփոխությունների հարցում, կարծում է, որ իշխանությունն արաբական աշխարհում տեղի ունեցածից պետք է դասեր քաղի: «Հասարակական պալատը» մշակեց նաեւ բողոքի ակցիաների ժամանակացույց: Սակայն շատերը, նաեւ ընդդիմության շրջանում, գիտակցում են, որ շտապելը եւ հասարակության հեղափոխական պոտենցիալը ճիշտ չզնահատելը կարող է կործանարար լինել:

Բացի այդ, Facebook սոցիալական ցանցում մի շարք ակտիվիստներ ստեղծեցին «Մարտի 11 - Ադրբեջանի ժողովրդի մեծագույն օրը» խումբը (ինչպես դա եղավ Եգիպտոսում), որին մի քանի հազար այցելու են միացել: Նախաձեռնության կազմակերպիչները մարտի 11-ի ընտրությունը պայմանավորում են երկու ամիս առաջ հենց այդ օրը Յոսուֆ Մուբարաքի հրաժարականով:

Ֆրանսիայում ուսանած եւ ներկայումս Ստրասբուրգում ապրող լրագրող Էլնուր Մաջիդլին, որը սոցիալական ցանցում ստեղծված խմբի կազմակերպիչներից է, նշել է, որ նման նախաձեռնությունը նպատակ ունի վերջ դնել անելանելի իրավիճակի զգացողությանը, որ տարածված է Ադրբեջանի քաղաքացիների շրջանում եւ կամք դրսևուրել՝ իրականացնելու ժողովրդավարական փոփոխություններ:

Ինչ վերաբերում է վարչակարգին, ապա վերջինս, ըստ ամենայնի, գիտակցում է, որ թե՛ աշխարհիկ, թե՛ կրոնական դաշտում վերահսկողության թուլացումը կարող է հանգեցնել անկայուն իրավիճակի եւ մտադիր չէ իրականացնել արմատական ժողովրդավարական բարեփոխումներ:

Սակայն ակնհայտ է, որ իշխանություններն անհանգստացած են. նրանք փորձում են բոլոր հնարավոր միջոցներով վիժեցնել երիտասարդական նախաձեռնությունները: Ասվածի ապացույցն են մարտի 11-ի բողոքի ակցիայի ծախողումը, ինչպես նաեւ՝ վերջին շրջանում մի շարք, այդ թվում սոցիալական ցանցի ակտիվիստների ձերբակալությունները:

Այս ամենին արդեն քննադատորեն արձագանքել են միջազգային իրավապաշտպան մի շարք կազմակերպություններ, այդ թվում՝ Freedom House-ը:

Իսկ թուրքական մամուլում հրապարակված տեղեկությունների համաձայն՝ լարվածությունը թուլացնելու համար Ալիեւը փորձում է էլ ավելի թեժացնել դարաբաղյան հակամարտության թեման:

Այսպիսով, արաբական աշխարհում տեղի ունեցող հեղափոխական գործընթացների առաջին ալիքը դեռեւս շոշափելի հարված չի հասցրել Ադրբեջանին: Գիշտ է, հասարակությունը դժգոհ է իշխանություններից, սակայն հնարավոր փոփոխությունների հարցում առկա անվստահությունը, ընդդիմադիրների նկատմամբ կիրառվող բռնությունները, ընդդիմության զգալիորեն թույլ եւ խոցելի դիրքերը, վերջիններիս շրջանում միասնականության, ինչպես նաեւ խարիզմատիկ եւ բոլորի կողմից ընդունելի գործիչների պակասը, նաեւ տարաբնույթ այլ գործոններ թույլ են տալիս ենթադրել, որ Ադրբեջանում տեսանելի ապագայում հազիվ թե հեղափոխական գործընթացներ տեղի ունենան:

Սակայն զարգացումները Միջին Արեւելքում դեռեւս շարունակվում են, իսկ դրանց ալիքը տարածում է ստանում: Եվ չնայած իշխանությունները վերահսկում են իրավիճակը, դժվար է ասել, թե հետագա իրողություններն ինչպես կանդրադառնան Ադրբեջանի վրա:

Ա.Յունուսովի կարծիքով՝ Ադրբեջանում դեպքերը կարող են զարգանալ եգիպտական սցենարով: Արաբագետ Ջարդուշտ Ալիզադեի համոզմամբ՝ հետխորհրդային տարածաշրջանում իրական բարեփոխումներ կիրականան միայն այն դեպքում, եթե դրա նախադեպը ստեղծվի Ռուսաստանում, որն ամենավճճորոշ դերակատարությունն ունի տարածաշրջանում: Իսկ ըստ մեկ այլ տեսակետի, որին շատ դեպքերում հակված են նաեւ ադրբեջանցի փորձագետները, Ադրբեջանի վրա շոշափելի կլինի ոչ այնքան արաբական կամ ռուսական, որքան իրանական գործոնի ազդեցությունը:

ԻՆՏԵՐՆԵՏԸ՝ ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ԲԵՆԻՊԱՆԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Արաբական աշխարհում վերջին ամիսներին ընթացող զարգացումները նոր սրություն են հաղորդել ժամանակակից քաղաքական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների նշանակության վերաբերյալ քննարկումներին: Իշխանությունների դեմ իրականացվող բողոքի գործողությունների ընթացքում ինտերնետի եւ, մասնավորապես, սոցիալական տարբեր ցանցերի օգտագործումը մի շարք վերլուծաբաններ գնահատում են որպես քաղաքական պայքարում նոր տեխնոլոգիաների կիրառման դարաշրջանի սկիզբ:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տեղեկատվական տեխնոլոգիաները եւ առաջին հերթին սոցիալական առավել խոշոր ցանցերը՝ Facebook, Twitter եւ այլն, կենտրոնացված են հիմնականում ԱՄՆ-ում, բազմաթիվ վերլուծաբաններ երրորդ աշխարհի պետություններում, այդ թվում՝ արաբական երկրներում արձանագրվող քաղաքական գործընթացներում այդ տեխնոլոգիաների օգտագործման ծավալների ընդլայնումը կապում են ԱՄՆ ռազմավարության հետ:

Արաբական աշխարհում տեղի ունեցող իրադարձություններում ԱՄՆ հնարավոր ներգրավվածությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել այդ գործընթացների ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հետեւանքները ԱՄՆ շահերի տեսակետից:

Օբամայի վարչակազմի հռչակած մերձավորարեւելյան քաղաքականության տրամաբանության համատեքստում՝ տարածաշրջանում լարվածության եւ անկայունության նոր օջախների առաջացումը, կարճաժամկետ առումով, չի բխում ԱՄՆ շահերից: Պատահական չէ, որ հատկապես Եգիպտոսում ծավալված իրադարձությունների առաջին օրերին Օբամայի վարչակազմը հանդես էր գալիս նախագահ Մուբարաքի կողմից իշխանության աստիճանական փոխանցման օգտին: Միայն բողոքի գործողությունների հետագա շարունակումը ամերիկյան վարչակազմին հարկադրեց ավելի հստակ դիրքորոշում որդեգրել եւ Մուբարաքից պահանջել թողնել նախագահի պաշտոնը:

Երկարաժամկետ հեռանկարում՝ արաբական պետություններում ժողովրդավարական ինստիտուտների հնարավոր ամրապնդումը համապա-

տասխանում է ԱՄՆ ռազմավարական շահերին: Այդ գործընթացը հնարավորություն կտա ավելի ամուր հիմքերի վրա դնել տվյալ պետությունների եւ եվրատլանտյան համակարգի միջեւ դաշնակցային հարաբերությունները, որոշակիորեն թուլացնել տարածաշրջանում հակաամերիկյան դիրքորոշում որդեգրած պետությունների դիրքերը:

Անդրադառնալով ԱՄՆ արտաքին քաղաքական ռազմավարությունում տեղեկատվական տեխնոլոգիաների, այդ թվում՝ ինտերնետի խաղացած դերին, հարկ է նշել, որ ինտերնետի ազատության եւ սոցիալական ցանցերի հասանելիության ապահովման հիմնախնդիրն Օբամայի վարչակազմի ուշադրության կենտրոնում է հայտնվել իշխանության գալուց գրեթե անմիջապես հետո: Ինտերնետի ազատության վերաբերյալ Օբամայի վարչակազմի դիրքորոշումը բավական մանրամասն ներկայացվել է պետքարտուղար Յիլարի Քլինթոնի՝ 2010թ. հունվարին եւ 2011թ. փետրվարին հատուկ այդ հիմնախնդիրն նվիրված ելույթներում: Ինտերնետի ազատության ապահովման մասին առաջին ելույթում Քլինթոնը հստակ նշում է, որ ԱՄՆ իշխանությունների համար ինտերնետի ազատության ապահովումը խոսքի ազատության պաշտպանության բաղկացուցիչ մասն է: Պետությունները ոչ միայն պարտավոր են քաղաքացիներին խաղաղ հանրահավաքներ եւ երթեր անցկացնելու հնարավորություն տրամադրել, այլեւ չպետք է խոչընդոտեն սոցիալական ցանցերում, զանազան բլոգներում եւ վիրտուալ այլ հարթակներում կառավարության դեմ քննադատության տարածմանը: Պետքարտուղարը նշում է, որ այդ պահանջը հավասարապես վերաբերում է բոլոր պետություններին, այդ թվում՝ զարգացած արեւմտյան երկրներին, որտեղ եւս ինտերնետի ազատության սահմանափակման ցանկացած քայլ անընդունելի է:

ԱՄՆ պետքարտուղարը շեշտում է, որ մի շարք պետությունների կողմից ինտերնետի ազատության սահմանափակման, ժամանակակից սոցիալական ցանցերի հնարավորություններն օտագործող ընդդիմադիր հայացքներ ունեցող գործիչների ձերբակալման քաղաքականությունը հակասում է մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունքներին: Տարօրինակ զուգադիպությամբ, խոսելով ինտերնետի ազատությունը սահմանափակող պետությունների մասին, Քլինթոնն իր 2010թ. հունվարի ելույթում անդրադառնում է Թունիսում ինտերնետի նկատմամբ իրականացվող գրաքննության եւ Եգիպտոսում շուրջ երեսուն բլոգերների ձերբակալության փաստին՝ նշելով, որ ԱՄՆ իշխանությունները մտադիր են քայլեր ձեռնարկել նշված, ինչպես նաեւ մի շարք այլ պետություններում, այդ թվում՝ Չինաստանում, Ուզբեկստա-

նում, Վիետնամում, ինտերնետի ազատության սահմանափակումները նվազեցնելու ուղղությամբ: Քլինթոնը ԱՄՆ վերջնական նպատակ է հռչակում միասնական ինտերնետի ձեւավորումը, որտեղ բոլորը կունենան հավասար հնարավորություններ տեղեկույթ ստանալու եւ հաղորդելու համար:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ Օբամայի վարչակազմը տեղեկատվական տեխնոլոգիաների ազատությունն ուղղակիորեն կապում է սոցիալ-տնտեսական զարգացման հետ: Վերոհիշյալ ուղերձում Քլինթոնը մեջբերում է Համաշխարհային բանկի հետազոտության տվյալները, որոնց համաձայն՝ զարգացող երկրներում բջջային հեռախոսների թվի տասը տոկոս աճը միջինը հանգեցնում է մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունքի մեկ տոկոս աճի: Ամերիկյան վարչակազմի պատկերացումների համաձայն՝ ինտերնետի ազատության ապահովումը ոչ միայն նպաստում է մարդու իրավունքների պաշտպանության մակարդակի բարելավմանը, այլեւ սոցիալական բարեկեցության աճին, հետեւաբար առաջին հերթին զարգացող պետություններում իշխանություններն իրենք պետք է շահագրգռված լինեն ինտերնետի եւ ընդհանրապես տեղեկատվական տեխնոլոգիաների ազատությունների պահպանմամբ:

Խոսելով ժամանակակից տեխնոլոգիաների մասին՝ Քլինթոնը նաեւ կարեւորում է տեղեկատվական ցանցերի պահպանվածության խնդիրը՝ հայտարարելով, որ հանրային եւ մասնավոր ամենատարբեր ցանցերի պաշտպանությունը չնախատեսված մուտքերից տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանի առավել կարեւոր հիմնախնդիրներից է:

Ամերիկյան իշխանությունները չեն սահմանափակվում միայն ինտերնետի ազատության ապահովման կոչերով: ԱՄՆ պետբյուջեից զգալի քանակությամբ գումարներ են հատկացվում իշխանությունների կողմից արգելափակված կայքերի հասանելիություն ապահովող զանազան ծրագրերի մշակմանը: Այդ նպատակների համար 2008–2010թթ. ԱՄՆ-ը հատկացրել է շուրջ քսան միլիոն դոլար, իսկ 2011թ. նախատեսվում է եւս քսանհինգ միլիոն դոլարի ֆինանսավորում: Միաժամանակ, ամերիկյան իշխանություններն ակտիվորեն աշխատում են այդ ծրագրերը տարբեր երկրների հասարակական կառույցներին, ընդդիմադիր հայացքներ ունեցող անհատ ակտիվիստներին տրամադրելու ուղղությամբ: Նշված անձանց եւ կառույցների համար կազմակերպվում են ուսումնական դասընթացներ:

Ինտերնետի ազատության ապահովմանը պետքարտուղար Քլինթոնն անդրադարձել է նաեւ 2011թ. փետրվարի 15-ին Ջորջ Վաշինգտոնի

համալսարանում ունեցած ելույթում: Այստեղ նա ուղղակիորեն հիշատակում է Եգիպտոսում տեղի ունեցած իրադարձությունները՝ հայտարարելով, որ հակակառավարական ցույցերի առաջին օրերին ինտերնետն արգելափակելու Եգիպտոսի իշխանությունների որոշումը ժամանակակից քաղաքական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների ունեցած կարելոր դերակատարության վկայությունն է: Այս ելույթում եւս ԱՄՆ պետքարտուղարը հայտարարում է ինտերնետի ազատության ապահովման անհրաժեշտության մասին՝ նշելով, որ ԱՄՆ-ը տարբերություն չի դնում խաղաղ հանրահավաքներ եւ երթեր անցկացնելու քաղաքացիների իրավունքների եւ սոցիալական ցանցերում սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու եւ կառավարությանը քննադատելու հնարավորության միջեւ:

Միաժամանակ, Քլինթոնը հայտարարում է, որ Թունիսում, Եգիպտոսում, ինչպես նաեւ 2009թ. նախագահական ընտրություններից հետո Իրանում տեղի ունեցած իրադարձություններում տեղեկատվական տեխնոլոգիաների դերակատարությունը չպետք է գերազնահատել: Դրանք մարդկանց տրամադրություններն արտահայտող գործիքներ են եւ ինքնուրույն չեն կարող որեւէ գործընթացի մեկնարկի պատճառ դառնալ:

Հարկ է ընդգծել, որ Քլինթոնի 2011թ. փետրվարի ելույթն ինտերնետի ազատության վերաբերյալ ավելի չափավոր էր եւ, ամենայն հավանականությամբ, դրա պատճառը Wikileaks-ի բացահայտումներն էին: Իր վերջին ելույթում Քլինթոնն անդրադարձավ նաեւ Wikileaks-ի հրապարակումներին՝ դատապարտելով նրա կողմից գաղտնի փաստաթղթերի հրապարակման փաստը: Նրա երկու ելույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ Wikileaks-ի բացահայտումներից հետո Օբամայի վարչակազմն ավելի զգուշավոր մոտեցում է որդեգրել ինտերնետի ազատության ապահովման հարցում՝ ազատությունների հետ միասին կարելորելով նաեւ դրանցից բխող պատասխանատվության խնդիրը:

ԱՄՆ արտաքին քաղաքական շահերի ապահովման տեսակետից՝ տեղեկատվական տեխնոլոգիաներին հատկացվող կարելոր դերի մասին է վկայում նաեւ 2011թ. փետրվարի 17-ին կայացած Օբամայի հանդիպումն այս ոլորտի ամերիկյան առաջատար ընկերությունների ղեկավարների հետ: Հանդիպման մասնակիցների թվում էին Yahoo, Google, Apple, Facebook, Twitter, Netflix եւ մի շարք այլ հայտնի կազմակերպությունների ներկայացուցիչներ: Չնայած պաշտոնապես հանդիպման հիմնական նպատակ էր հայտարարված ԱՄՆ-ում բարձր տեխնոլոգիաների ոլորտի հետագա զարգացման, այդ գործընթացում պետու-

թյան կողմից հնարավոր աջակցության ուղենիշների քննարկումը, սակայն ակնհայտ է, որ արաբական աշխարհում տեղի ունեցող վերջին զարգացումների համատեքստում ԱՄՆ նախագահի՝ ինտերնետային ծառայություններ մատուցող համաշխարհային առաջատար ընկերությունների ղեկավարների հետ հանդիպումը չէր կարող սահմանափակվել բացառապես ԱՄՆ տնտեսական խնդիրներին առնչվող հարցերի քննարկմամբ:

Այսպիսով, ակնհայտ է, որ Օբամայի վարչակազմը կարելուրում է ինտերնետի դերակատարությունն արտաքին քաղաքականության իրականացման համատեքստում եւ շարունակելու է քայլեր ձեռնարկել գլոբալ մասշտաբով ինտերնետի ազատության եւ հասանելիության ապահովման ուղղությամբ:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Քրիստիա Ֆրիլենդ

Մերձավոր Արևելքի ապստամբությունների զոհերից են փորձագետները, որոնք չկարողացան կանխատեսել դրանց սկիզբը: Մասնավորապես, Արժույթի միջազգային հիմնադրամն իր վրա հարված վերցրեց 2010թ. ապրիլին Եգիպտոսի վերաբերյալ սեփական հաշվետվության համար, որտեղ կազմակերպությունը գովաբանում էր Եգիպտոսում «2004-ից իրականացվող կայուն եւ լայնամասշտաբ բարեփոխումները»՝ մշելով, որ դրանք տնտեսությունը դարձրին առավել կայուն եւ արտաքին ազդեցությունների նկատմամբ քիչ ընկալունակ: Իսկ Կենտրոնական հետախուզական վարչության տնօրեն Լեոն Փանեթան վերապրեց սեփական խայտառակությունը՝ տեսնելով, թե ինչպես ԱՄՆ Կոնգրեսի համար արված իր հրապարակային կանխատեսումները դրանք անելուց բառացիորեն մի քանի ժամ հետո սխալ դուրս եկան:

Ով տեսել է Խորհրդային Միության անկումը կամ 2008թ. ֆինանսական ճգնաժամը, փորձագետների այդ անհաջողությունների մեջ կնկատի շատ ծանոթ մի բան՝ հայացքների համակարգի ու պարադիգմի արագ, մասշտաբային փոփոխությունները, եւ կարելուր չէ՝ դրանք ներկայացնում են պայթած ֆինանսական պղպջա՞կ՝ փչված երկար տարիներ, թե՞ տասնամյակների կայունությամբ առանձնացող քաղաքական վարչակարգի դեմ ժողովրդական ապստամբություն. ցանկացած դեպքում պարզվում է, որ մեզ համար բարդ է այդ իրադարձությունները կանխատեսել:

Տնտեսագետ Դեն Արիելին՝ Չյուսիսային Կալիֆորնիայի Դյուքի համալսարանից, գտնում է, որ երբ մեզ մոտ առկա է ստատուս-քվոյի նկատմամբ հիմնավորված եւ վաղեմի հետաքրքրություն, մեր ուղեղներն ինքնաբերաբար իրավիճակն ընկալում են որպես կայուն ու լավ:

Կանխագուշակության ձիրքով օժտված քաղաքագետ Մայքլ Մաքֆոլը, մինչ Սպիտակ տանն աշխատելը, ժողովրդավարության եւ ավտորիտարիզմի մասին իր գրքում պնդում էր, թե վարչակարգի կայունության վերաբերյալ ենթադրությունները միշտ գերակայում են, եւ այն դեպքերում, երբ այդ վարչակարգերն ավտորիտար են, այդ ենթադրությունները միշտ սխալ են: Մաքֆոլը կտրականապես համաձայն չէր տարածված կարծիքի հետ՝ հայտարարելով. «Ենթադրել, որ ինքնակալական վարչակարգերի

մերկայիս կառուցվածքը կգոյատևի թեկուզ 50 տարի, ավելի մեծ միանտություն է, քան հավատալ, թե այդ վարչակարգերից մի քանիսը կարող են ժողովրդավարության անցում իրականացնելու ճանապարհին հաջողությունների հասնել»:

Պարոն Մաքֆոլի համոզվածությունն այսօր էլ միանգամայն վատ չի դիտվում: Բայց եթե նույնիսկ մենք կարողանանք հաղթահարել մեր հոգեբանական դիմադրությունը վարչակարգի փոփոխության բուն հասկացությանը, մեծ ճշգրտությամբ կանխագուշակել, թե բռնակալները հատկապես երբ կտապալվեն, անհնարին է: «Իրենց բնությամբ այդ շրջադարձային կետերն անկանխատեսելի են»,–նշում է Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի էկոնոմիկայի ոլորտի պրոֆեսոր Դարոն Ասեմողլուն:

Լավագույն տարբերակը խորհրդածելու, թե որքան կգոյատևի այս կամ այն վարչակարգը, կլինե՞ր փորձը հասկանալու, թե այդ վարչակարգում ապստամբության ներուժն ինչպիսին է՝ հաշվի առնելով ճիշտ կատալիզատորը: «ժամանակի մեծ մասն այն քնած վիճակում է, եւ, հետեւաբար, ապստամբությունների ոչ մի կանխատեսելիության մասին խոսելու հարկ չկա»,–նշում է Ասեմողլուն: «Սակայն երբ մենք թեւակոխում ենք կրիտիկական շրջան, ինչպես, օրինակ, այժմ, այդ թաքնված գործոնը սկսում է ունենալ միանգամայն կանխատեսելի ուժ»:

Այդ ոգով իմ գործընկեր Փիթեր Ռուդեգեյերն ու ես ապստամբության համար թաքնվածության բարձր ներուժով երկրների որոշման համար անցկացրինք մոտավոր հաշվարկներ: Մենք հաշվի առանք չորս գործոն՝ քաղաքական ազատությունը (այն բանի հիման վրա, որ ժողովրդավարական վարչակարգերը, սովորաբար, վարչակարգի փոփոխման նպատակին հասնելու համար չեն պահանջում ժողովրդական ապստամբություններ), կոռուպցիայի մակարդակը, սննդամթերքի հատվածում գնային շոկի նկատմամբ խոցելիությունը եւ համացանցի հասանելիության մակարդակը: Մեր աղյուսակն օգտագործել է այս չորս գործոնների չափման հանրամատչելի տարբերակներ, եւ արդյունքում մենք ստացանք ժողովրդական ապստամբությունների համար առավել խոցելի 25 երկրների ցանկը: Լիբիան, Ալժիրն ու Եգիպտոսն ընկան «թեժ տասնյակի» մեջ: Հավանաբար, առավել ուշագրավ է այն փաստը, որ առաջին տասնյակում հայտնվեցին Ռուսաստանը, ինչպես նաեւ Ուզբեկստանը, Ադրբեջանը եւ Վենեսուելան:

Wired հանդեսի տվյալներով, վերջին երեք տարիներին ամերիկյան ռազմական եւ հետախուզական գործակալությունները հուզումները եւ ապստամբությունները կանխատեսող համակարգչային մոդելների վրա

ավելի քան 125 մլն դոլար են ծախսել: Այս ամենը խոնարհաբար նկատի ունենալով՝ ասենք, որ այդ արագ եւ կեղտոտ հաշվարկներն ավելի շուտ նախատեսված են վեճեր հրահրելու, քան հաջորդ թեժ կետը ցույց տալու համար:

Դոկտոր ԱսենՕղլուն ենթադրում է, որ հաշվարկների կատարելագործման միջոցներից կարող է լինել տարբեր գործոնների միմյանց հետ փոխգործակցության բացահայտումը, որոնք վարչակարգը դարձնում են խոցելի հեղափոխությունների համար. «Օրինակ, կոռուպցիայի բարձր մակարդակն առանց համացանցի ներթափանցման կամ համացանցի տարածման բարձր մակարդակն առանց կոռուպցիայի ոչ մի ճնշում չեն ստեղծելու, որը նպաստի բողոքական տրամադրությունների աճին, բայց երբ առկա են երկու գործոններն էլ, դա արդեն բուլրովին այլ խաղ կլինի»:

Տորոնտոյի համալսարանի քաղաքական գիտությունների ոլորտի պրոֆեսոր Լուքան Ուեյն ասում է, որ վարչակարգի փխրունության աստիճանի որոշման մյուս գործոնն այն է, թե արդյոք ավտորիտար կառավարությունը հեղափոխական պայքարի արդյունք է: Գաղափարապես միասնական հեղափոխական կուսակցության կողմից ղեկավարվող դիկտատուրաները, ինչպես, օրինակ, Իրանում, եւ ավելի փոքր չափով՝ Չինաստանում, դոկտոր Ուեյնի կարծիքով, առավել ամուր են, քան նրանք, որոնց առաջնորդները հենվում են սոսկ զենքի ուժի եւ հովանավորության վրա:

Սննդամթերքի գների հետ կապված ցնցումները հաճախ այնպիսի կատալիզատոր են, որոնք թաքնված խոցելիություն ունեցող վարչակարգերի պայմաններում ապստամբության եւ մարդկանց փողոց դուրս գալու են վերածվում. այդպես զարգացավ իրավիճակը Թունիսում, այն ճիշտ էր նաեւ բուլղարիայի հեղափոխության համար:

Եվս մի բան, ինչը կարող է տեղից շարժել ապստամբության թաքնված ներուժով հասարակությանը եւ մղել նրան գործողությունների՝ դա էֆեկտն է, որը դոկտոր ԱսենՕղլուն անվանում է «վարակ». ֆենոմեն, որ ծանոթ է յուրաքանչյուրին, ում անակնկալի է բերել 2008թ. գլոբալ ֆինանսական ճգնաժամը:

Երկու դեպքում էլ անսպասելի հավատը, թե նախորդ կայուն ստատուս-քվոն կարող է փոփոխվել, բավարար ուժ ուներ փոխելու իրականությունը: Ընկալման եւ փաստերի միջեւ նման փոխգործակցությունն այն է, ինչը հայացքների համակարգի փոփոխությունների ոլորտում փորձագետ Ջորջ Սորոսը կոչում է հակազդելիություն կամ վերադարձելիություն:

Այսօր անգամ ամենահզոր ավտորիտար վարչակարգերը, կարծես, մտահոգված են հեղափոխության կրակի հնարավոր տարածումով: Բավական է նայել էլեկտրոնային ցանցերով տեղեկատվության մուտքը եւ Մերձավոր Արեւելքի ապստամբությունների քննարկումն արգելափակելու Չինաստանի փորձերին: Կրեմլը, հավանաբար, անհանգստանալու էլ ավելի շատ առիթ ունի. այստեղ հարցախույզի ենթարկվածների մեկ երրորդը գտնում է, որ զանգվածային բողոքների «եզիպտական սցենարը» միանգամայն հնարավոր է: Սա այն մտածելակերպն է, որն ունի խռովությունը հեղափոխության վերածելու ներուժ:

The New York Times

25.02.2011

ԱՐԱԲԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Դմիտրի Տրենին

Մերձավոր Արևելքում ապստամբությունները շարունակվում են: Թեև ոմանք պնդում են, որ Եգիպտոսի ու Թունիսի ավտորիտար կառավարիչների համար կանխատեսել էին հենց նման վախճան, ոչ ոք չկարողացավ գուշակել, թե հատկապես երբ տեղի կունենա ընդվզումը եւ կվերաճի, արդյոք, այն վարչակարգի տապալման: Այսօր դժվար է կանխատեսումներ անել, թե արաբական երկրների որ վարչակարգերը կկարողանան պահպանել իրավիճակի վերահսկողությունը եւ որոնք կհետեւեն Բեն Ալիի ու Մուբարաքի անցած ճանապարհին: Առավել քիչ պարզ է, թե ով կգա հերթափոխելու գահընկեց արված ինքնակալներին: Անորոշությունն, ինչպես երբեք, մեծ է: Այնուամենայնիվ, անցած շաբաթները նախնական եզրակացությունների հնարավորություն են տալիս:

1. Խնորումներն արաբական երկրներում տասնամյակներով կուտակված ներքին հակասությունների զարգացման արդյունք են, որոնք քաղաքական իշխանությունը մենաշնորհած կոռուպացված վարչակարգերի շրջանակներում սկզբունքորեն անլուծելի են: Արտաքին գործոնի դերն արաբական իրադարձություններում էական է, բայց սահմանափակ: Չասկանալի է, որ ո՛չ Վաշինգտոնը, ո՛չ Փարիզը չէին պլանավորել իրենց հավատարիմ դաշնակիցների եւ հուսալի գործընկերների տապալումը: Միաժամանակ, վերջին տասնամյակների գլոբալացումը՝ տեխնիկական առաջընթացի հետ միասին, տեղեկատվության համար ապահովեցին նախկինում չտեսնված ընդարձակություն եւ տարածման արագություն:

2. Չնայած շատ երկրներում՝ Ալժիրից մինչեւ Բահրեյն եւ Իրանից մինչեւ Ջիբութի, ելույթների թվացյալ միաժամանակությանն ու ժողովրդական ցասումի նույնաման հեռուստատեսային պատկերին, իրադարձությունների զարգացման միասնական սցենարներ եւ հետագծեր չեն դիտվում: Ինչ-որ տեղ առաջին պլանում հայտնվում են «առաջադեմ» միջին խավերը, որոնք պայքարում են անփոփոխ վերնախավի ճնշող տիրապետության դեմ, ինչ-որ տեղ ցեղային տարբերություններ են, ինչ-որ տեղ՝ միջդավանանքային երկպառակություն: Բառափոխելով դասականին՝ կարող ենք ասել, որ յուրաքանչյուր երկիր դժբախտ ու դժգոհ է յուրովի, եւ, վերջին հաշվով, ինքն է որոշում իր ճակատագիրը:

3. Այդ ճակատագրերի որոշման գործում առանցքային դեր է խաղում եւ խաղալու է բանակը: Իշխանական կուսակցությունները, այնպիսիք, ինչպիսին է եգիպտական ժողովրդադեմոկրատական կուսակցությունը, փլուզվում են ինչպես թղթե տնակներ: Աշխարհիկ ընդդիմությունն ամենուրեք թույլ է, անկազմակերպ եւ առանձնապես ճանաչված չէ: Իսլամիստական արմատականները սպասում են իրենց «հոկտեմբերի 17-ին»: Պատասխանատվությունն իրենց վրա են վերցնում զինվորականները: Թունիսում բանակը նախագահին պարզապես սահմանից դուրս շարտեց, եգիպտոսում հրաժարվեց կրակել ամբոխի վրա, իսկ հետո բազմամյա կառավարչին ստիպեց իշխանությունը փոխանցել զինված ուժերի հրամանատարությանը: Լիբիայում ու Բահրեյնում՝ ընդհակառակը, զորքերը կրակ բացեցին բողոքողների վրա, հեղվեց արյուն:

4. Բողոքականներն իշխանությունից պահանջում են երկու կարեւոր բան՝ բնակչության մեծամասնության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում եւ ազատություն, այսինքն՝ իշխանության ապամենաշնորհում ու երիտասարդության համար ուղղաձիգ առաջընթացի ուղիների բացում: Այդ պահանջներում ո՛չ մի գաղափարախոսություն, ո՛չ մի «իզմ» չկա: Նման մոտեցումը ժողովրդական շարժումների հասունության նշան է: Սիւսանական, պարզ չէ, թե որ կողմը կթեքվի հասարակական կարծիքը, երբ հայտնաբերվի, որ, չնայած բռնատիրությունների խորտակմանը, ճնշող մեծամասնության համար սոցիալ-տնտեսական վիճակը չի բարելավվել:

5. Արաբական աշխարհում արեւմտյան տիպի ժողովրդավարության հաստատումը քիչ հավանական է: Իրաքի, Լիբանանի, պաղեստինյան տարածքների ակնառու օրինակները վկայում են, որ ներկայացուցչական կառավարման հաստատումը, բարենպաստ պայմաններում անգամ, երկարատեւ գործընթաց է:

6. Արաբական աշխարհի համար իրանական նմուշի իսլամական վարչակարգը նույնպես անխուսափելի չէ: Իրանական աստվածապետությունը, չնայած նրա ժողովրդավարական տարրերին, արաբների համար հրապուրիչ չէ: Առավել եւս, Իրանն ինքը, ուր 2009–2010թթ. իշխանություններին հաջողվեց ճնշել ժողովրդական «կանաչ» շարժումը, նոր ցնցումներ է ապրում՝ այժմ արդեն արաբական իրադարձությունների ազդեցության ներքո:

7. Արաբական աշխարհի համար լավագույն տարբերակը թուրքական մոդելով զարգացումն է: Խոսքը սոցիալ-քաղաքական եւ տնտեսական բարեփոխման մասին է՝ ուղղված համեմատաբար լայն հասարակական հենքի վրա աշխարհիկ պետության կառուցմանը եւ հաշվի առնելով

մուսուլմանական մշակութային գործոնը: Մուսուլմանական աշխարհում կան նման հաջողակ «ոչ իսլամական» պետությունների օրինակներ՝ Ինդոնեզիա, Մալայզիա:

8. Իրանական վարչակարգը, որի փլուզումը շատ է ցանկանում Արեւմուտքը, այս անգամ, ըստ ամենայնի, կդիմանա: Իրանն, անկասկած, գնում է լայնամասշտաբ ճգնաժամին ընդառաջ, սակայն երբ եւ ինչ հանգամանքներում այդպիսի ճգնաժամ կբռնկվի, այժմ անհնարին է ասել:

9. Կդիմանա նաեւ Սաուդյան Արաբիան: Թեեւ ներկայիս թագավորն արդեն 87 տարեկան է եւ տկար, սաուդների հարստության ժամը դեռ չի հնչել: Հաշվի առնելով Սաուդյան Արաբիայի նշանակությունը ոչ միայն տարածաշրջանում, այլեւ աշխարհում՝ վիթխարի պատասխանատվություն է ընկնելու հաջորդ թագավորի վրա: Չի ընկնի եւ Հորդանանի հաշիմյան միապետությունը, որտեղ արքայական ընտանիքը, ի տարբերություն նախարարների, ժողովրդականություն է վայելում: Քուվեյթը, Կատարը եւ Արաբական Միացյալ Եմիրությունները կարող են հաղթահարել ճգնաժամը շնորհիվ բարձր կենսամակարդակի, կրոնական միատարրության (ի տարբերություն Բահրեյնի) եւ արտասահմանցի աշխատողների մեծ զանգվածի առկայության, որոնց համար գործադուլ անելը ոչ մի իմաստ չունի:

10. Եմենի վարչակարգը երբում է, սակայն շնորհիվ դժգոհների անջատվածության եւ նրանց ճնշելու համար ուժի գործադրման պատրաստականության, պահպանվելու հնարավորություն ունի: Լիբիական բռնապետ Քադաֆին ցուցադրեց, որ պատրաստ է հակակառավարական ելույթներն արյան մեջ խեղդել, բայց եթե նույնիսկ նրան այս անգամ հաջողվի մնալ իշխանության ղեկին, Ջամահիրիայի վարչակարգը, որ գոյություն ունի 1969-ից, հազիվ թե իր հիմնադրից ավելի ապրի:

11. Վերջին շաբաթներին Օբամայի վարչակազմին հարկ եղավ իդեալների եւ շահերի միջեւ դժվար ընտրություն անել: Թեպետեւ դժվարությամբ, Միացյալ Նահանգներին առայժմ հաջողվեց կայունացնել անցումային գործընթացը Եգիպտոսում: Այդուհանդերձ, ակնհայտ է, որ ԱՄՆ ազդեցությունը Եգիպտոսում եւ, առհասարակ, տարածաշրջանում, ամենայն հավանականությամբ, կկրճատվի:

12. Եվրամիությունը դրսևորեց իր անգործունակությունն արտաքին քաղաքականության ոլորտում: Հենց Եգիպտոսն ու Թունիսն են եղել Ֆրանսիայի նախաձեռնությամբ ստեղծված Միջերկրածովյան միության գլխավոր հենարանները: Բացի այդ, Հյուսիսային Աֆրիկայից չվերահսկվող ներգաղթից տառապող եվրոպացիները խոստովանեցին, մի կողմից՝ «բազմամշակութային» մոդելով ներգաղթյալներին ինտեգրելու

իրենց անընդունակությունը եւ, մյուս կողմից՝ ամերիկյան նմուշով «ծուլման կաթսայի» անհնարիությունը:

13. Աշխարհաքաղաքական տեսակետից ամենամեծ չափով շահածը Թուրքիան է, որը շատ արաբների կողմից ընդունվում է որպես մոդել, ինչպես նաեւ Չինաստանը, որը հեռանկարում կարող է զբաղեցնել որոշ առանձին դիրքեր, որոնք այժմ լքված են Միացյալ Նահանգների կողմից:

14. Ռուսաստանի համար կատարվածը նաեւ աշխարհաքաղաքական դաս է: Մերձավոր եւ Միջին Արեւելքում ռուսական դրույքները համեմատաբար մեծ չեն եւ առանձնակի վտանգների չեն ենթարկվում: Միաժամանակ, Մոսկվան չի կարող անտեսել ավտորիտար վարչակարգերի կայունության խնդիրը, որ ծագել է նախկին ԽՍՀՄ-ի հարավում: Այն նոր խնդիր չէ. երկու տասնամյակի ընթացքում տեղի ունեցան արյունահեղ քաղաքացիական պատերազմ Տաջիկստանում, հեղափոխություններ Ղրղզստանում, գումարած պալատական հեղաշրջում Թուրքմենստանում: Այս տասնամյակում, սակայն, որոշվելու է տարածաշրջանի երկու ամենախոշոր երկրների՝ Ղազախստանի եւ Ուզբեկստանի ճակատագիրը, ուր անողոքաբար ավարտին է մոտենում հիմնադիր նախագահների կառավարման ժամկետը: Երկու երկրների վերնախավերում առկա են անհաղթահարելի բարդություններ՝ կապված իշխանության փոխանցման գործընթացի հետ: Մինչ «վերելներում» կենտրոնացած են իշխանության եւ սեփականության հարցերի վրա, «ներքեւներում» կուտակվում են հակասություններ, որոնք հաճախ ելք չեն գտնում: Իրավիճակը հնարավորինս լուրջ է: Դեռեւս կա ժամանակ, պետք է արաբական փորձից դասեր քաղել:

ИноСМИ

21.02.2011

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տեր-Հարությունյան, Սերգեյ Գրիգյան ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ԳԼՈՒԲԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՑԵՆԱՐԿԵՐԸ	1
Սուրեն Սարյան ՆՈՐ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ	8
Ռուբեն Մելքոնյան ՆՈՕՍՄԱՆԻՁՄԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	13
Սեւակ Սարուխանյան ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ	18
Արաքս Փաշայան «ԱՐԱԲԱԿԱՆ ՍՑԵՆԱՐԻ» ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ	23
Բենիամին Պողոսյան ԻՆՏԵՐՆԵՏԸ՝ ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ	28
Քրիստիա Ֆրիլենդ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	33
Դմիտրի Տրենին ԱՐԱԲԱԿԱՆ ԴԱՍԵՐ	37

*Շապիկին պատկերված է
Բանանց գյուղի Շինուհանդ տեղամասը
(Հյուս. Արցախ)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: